ԻՆՉՊԵՍ ԱՊԱՀՈՎԵԼ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 11-ՐԴ ՀՈԴՎԱԾԸ

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիային առնչվող աշխատությունների հավաքածու

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

ԻՆՉՊԵՍ ԱՊԱՀՈՎԵԼ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 11-ՐԴ ՀՈԴՎԱԾԸ

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիային առնչվող աշխատությունների հավաքածու

Հեղինակ.
Սիլվիա Ուոլբի
Սոցիոլոգիայի պատվավոր պրոֆեսոր,
Գենդերային հետազատությունների ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի վարիչ
Լանկաստերի համալսարան, Միացյալ Թագավորություն

Եվրոպայի խորհուրդ

Ֆրանսերեն հրատարակությունը.

Assurer la collecte des donnees i et la recherche sur la violence a l'egard i des femmes et la violence domestique – Article 11 de la Convention d'Istanbul

Այս աշխատանքում զետեղված կարծիքների պատասխանատուն հեղինակն է, և դրանք կարող են չարտացոլել Եվրոպայի խորհրդի պաշտոնական քաղաքականությունը

Այս փաստաթղթի կամ դրա որևէ մասի վերարտադրման կամ թարգմանության բոլոր հարցումներ պետք է հասցեագրել Հաղորդակցության տնօրինությանը (F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int):

Սույն փաստաթղթին վերաբերող ցանկացած այլ հաղորդակցություն պետք է հասցեագրել Ժողովրդավարության գլխավոր տնօրինության Հավասարության բաժնին:

Կազմի դիզայնը և շարվածքը՝ Փաստաթղթերի և հրապարակումների պատրաստման վարչություն (SPDP), Եվրոպայի խորհուրդ

Լուսանկարները՝ Shutterstock

© Եվրոպայի խորհուրդ, մարտ 2016 թ.

Բովանդակություն

Ներածություն	**5**
11-րդ հոդվածի շրջանակը	**7**
Բռնության այն ձևերի սահմանումը, որոնց նկատմամբ կիրառելի է Ստամբուլի կոնվենցիան	8
Վարչական տվյալների, հետազոտական տվյալների և ուսումնասիրությունների համակարգումը	10
Հավաքվող տեղեկությունների դասակարգման խմբերը	11
Սովորական տվյալները	12
Հանրությանն հասանելի տվյալները	12
Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ տվյալների հավաքագրումը և հետազոտությունները	**13**
Վարչական տվյալները	13
Իսպանիա	15
Դանիա	16
Հետազոտությունների տվյալները	16
Ուսումնասիրությունները	23
Կանանց նկատմամբ բռնության եվ ընտանեկան բռնության վերաբերյալ տվյալների հավաքագրման և հետազոտությունների համակարգումը	**29**
Համակարգող պաշտոնական մարմինները	29
Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող մոնիթորինգը	31
Ստամբուլի կոնվենցիայի կատարման մոնիթորինգը	31
Քաղաքականության իրագործման առաջընթացի մոնիթորինգը	31
Միջազգային հենանիշները	33
Եզրակացություններ	**37**
Ստուգաթերթ	**39**
Եվրոպայի խորհրդի կարևորագույն նյութերը	**41**
Օգտագործված գրականության ցանկ	**42**

Ներածություն

Տեղեկատվությունը և գիտելիքը կարևորագույն նշանակություն ունեն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի արդյունավետ քաղաքականություններ մշակելու համար: Տեղեկատվություն և գիտելիք ձևավորելը քաղաքականություն մշակողներին և քաղաքացիական հասարակությանն հնարավորություն է տալիս գնահատել զարգացումների ընթացքը և բարելավել քաղաքականությունը:

Տվյալների հավաքագրումը և հետազոտություններն օգնում են այնպիսի քաղաքականությունների և միջոցառումների նախագծմանը, որոնք անհրաժեշտ են տուժողներին պաշտպանելու և աջակցելու և կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունն արմատախիլ անելու համար: Ավելին, տվյալների հավաքագրումը և հետազոտություններն անհրաժեշտ են՝ պարզելու համար, թե արդյոք այդ բռնությունը կանխելու և դրա դեմ պայքարելու առումով քաղաքականությունները տալիս են արդյունք: Որպեսզի տեղեկատվությունն արդյունավետ լինի, այն պետք է տրամադրվի միասնական մոտեցման շրջանակում՝ հավուր պատշաճի հաշվի առնելով գործնական զարգացումները: Այս առումով, Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (հետայսու՝ «Ստամբուլի կոնվենցիա») մասնակից պետություններից պահանջում է բացվածքով վիճակագրական տվյալներ հավաքել և աջակցել կոնվենցիայի շրջանակի մեջ ներառված բռնության բոլոր ձևերին առնչվող հետազոտություններին:

Սույն աշխատության նպատակն է ընդհանուր տեղեկություններ տալ տվյալների հավաքագրման և հետազոտությունների վերաբերյալ, ինչպես նաև՝ գործնական խորհուրդներ տալ քաղաքականություն

մշակողներին և պրակտիկ աշխատողներին առ այն, թե ինչ է պետք անել Ստամբուլի կոնվենցիայի 11-րդ հոդվածի կատարումն ապահովելու համար: Տեղեկություններ կան գնահատման համակարգի և տվյալների հավաքման գործիքների մասին, որոնք անհրաժեշտ են վարչական և հետազոտական համապատասխան տվյալները կուտակելու և վերլուծելու համար: Բերված օրինակները ցույց են տալիս, թե վարչական և հետազոտական տվյալներն ինչպես են կարող ձեռք բերվել անդամ պետություններում: Ներկայացվում են արդյունավետ հետազոտական ծրագրերի օրինակներ: Վերջում ներկայացվում է ստուգաթերթը, որում ամփոփված են տվյալների հավաքագրման և հետազոտությունների վերաբերյալ Ստամբուլի կոնվենցիայի 11-րդ հոդվածում տեղ գտած պահանջները:

11-րդ հոդվածի շրջանակը

Ստամբուլի կոնվենցիայի (Եվրոպայի խորհուրդ, 2011a) 11-րդ հոդվածով պահանջվում է հավաքագրել տվյալներ, որոնք կօգնեն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի նպատակի իրագործմանը Եվրոպայում: Հոդվածի շրջանակն հստակեցված է Կոնվենցիայի բացատրական զեկույցի մեջ (Եվրոպայի խորհուրդ, 2011b), և դրա էությունն հասկանալու համար հաշվի են առնվում նաև Եվրոպայի խորհրդի այլ փաստաթղթեր (Եվրոպայի խորհրդի 2014 թվականի սեմինարի նյութերը, Եվրոպայի խորհուրդ 2014, 2010, 2008b, 2008a, 2007, 2006): Հավաքագրվող տվյալները պետք է լինեն թե՛ վարչական տվյալների, թե՛ հետազոտությունների տվյալների տեսքով: Պետք է հետազոտել՝ ուսումնասիրելու համար բռնության պատճառները և դրա կանխարգելման մեթոդները: Տվյալների հավաքագրումը պետք է համակարգի 10-րդ հոդվածով նախատեսված ազգային մարմինը:

Ստամբուլի կոնվենցիա, հոդված 11

1.Սույն Կոնվենցիայի կատարման նպատակով, մասնակից պետությունները պարտավորվում են՝

ա.կանոնավոր պարբերականությամբ դասակարգված վերաբերելի վիճակագրական տվյալներ հավաքել սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի դեպքերի մասին;

բ.աջակցել հետազոտությունների անցկացմանը՝ հիմնախնդրի խորքային պատճառների և հետևանքների, դրսևորման դեպքերի և դատապարտումների տոկոսային հարաբերակցության, ինչպես նաև ի կատարումն սույն Կոնվենցիայի ձեռնարկված միջոցառումների արդյունավետության վերաբերյալ:

2.Մասնակից պետությունները պետք է ձեռնամուխ լինեն կանոնավոր պարբերականությամբ անցկացնելու բնակչությունն ընդգրկող հետազոտություններ՝ սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի տարածվածությունն ու զարգացման տենդենցները գնահատելու

համար:

3.Մասնակից պետությունները սույն Կոնվենցիայի 66-րդ հոդվածում նշված Անկախ փորձագիտական խմբին պետք է տրամադրեն սույն հոդվածի համաձայն հավաքված տեղեկատվությունը՝ միջազգային համագործակցությունը խթանելու և միջազգային ցուցիչների հիման վրա կատարողականի գնահատման հնարավորություն տալու նպատակով:

4.Մասնակից պետություններն պետք է ապահովեն, որպեսզի սույն հոդվածի համաձայն հավաքված տեղեկատվությունը մատչելի լինի հանրության համար:

Բռնության այն ձևերի սահմանումը, որոնց նկատմամբ կիրառելի է Ստամբուլի կոնվենցիան

Տվյալներ պետք է հավաքագրել բռնության բոլոր այն ձևերի վերաբերյալ, որոնց նկատմամբ կիրառելի է Կոնվենցիան: Բռնության ձևերը սահմանված են կոնվենցիայի երկու մասերում. նախ, կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը սահմանված են 3-րդ հոդվածում, և երկրորդը, բռնությանը 9 ձևեր առանձին սահմանված են 33-րդից 40-րդ հոդվածներում, որոնք վերաբերում են նյութական իրավունքի նորմերին.

> 3.ա. «կանանց նկատմամբ բռնություն»՝ հասկացվում է որպես մարդու իրավունքների խախտում և կանանց նկատմամբ խտրականության ձև և պետք է ներառի գենդերային հիմքով բռնության այն բոլոր գործողությունները, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել կանանց ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական վնաս պատճառելուն, այդ թվում՝ նման գործողություններ կատարելու սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայականորեն զրկելը, որոնք տեղի են ունենում հանրային կամ մասնավոր կյանքում,
>
> 3.բ. «ընտանեկան բռնություն»՝ նշանակում է ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության գործողությունները, որոնք կատարվում են ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում կամ նախկին կամ ներկա ամուսինների կամ զուգընկերների միջև, անկախ նրանից, թե արդյոք կատարողը բնակվում է կամ բնակվել է տուժողի հետ նույն բնակարանում,
>
> 3.դ. «գենդերային հիմքով կանանց նկատմամբ բռնություն»՝ նշանակում է այն բռնությունը, որը կնոջ նկատմամբ դրսևորվում է նրա կին լինելու պատճառով կամ որը կանանց նկատմամբ դրսևորվում է անհամաչափորեն:

Բռնության այն 9 ձևերից, որոնք սահմանված են 33-րդից 40-րդ հոդվածներում, 8-ն առանձնացված են որպես դիտավորությամբ կատարման դեպքում քրեականացման ենթակա գործողություններ. «հոգեբանական բռնություն», «հետամտում», «ֆիզիկական բռնություն», «սեռական բռնություն՝ ներառյալ բռնաբարություն», «հարկադիր ամուսնություն», «կնոջ սեռական օրգանների խեղում», «հղիության հարկադիր ընդհատում և հարկադիր ամլացում», և ևս մեկ ձև, որը ենթակա է կամ քրեական, կամ այլ իրավական պատժի, այն է՝ «սեռական հետապնդումը»: Բռնության այդ ձևերի սահմանումները զետեղված են ստորև:

- **Հոգեբանական բռնություն.** «գործողություններ, որոնք հարկադրանքի կամ սպառնալիքների միջոցով լրջորեն խախտում են մեկ այլ անձի հոգեբանական անձեռնմխելիությունը» (հոդված 33):
- **Հետամտում.** «մեկ այլ անձի դեմ դիտավորյալ շարունակաբար կատարվող սպառնալից գործողությունները, որոնք այդ անձի մոտ վախ են հարուցում սեփական անվտանգության համար» (հոդված 34):
- **Ֆիզիկական բռնություն.** «մեկ այլ անձի դեմ դիտավորությամբ կատարվող ֆիզիկական բռնության գործողությունները» (հոդված 35):
- **Սեռական բռնություն՝ ներառյալ բռնաբարություն.** «ա. մեկ այլ անձի հետ, առանց այդ անձի համաձայնության, վագինալ, անալ և օռալ ճանապարհով թափանցելու միջոցով, մարմնի որևէ մասի կամ առարկայի միջոցով սեռական բնույթի գործողություն կատարելը; բ. մեկ այլ անձի հետ, առանց այդ անձի համաձայնության, սեռական բնույթի այլ գործողություն կատարելը; գ. անձին, առանց նրա համաձայնության, երրորդ անձի հետ սեռական բնույթի գործողություններ կատարելուն կամ ենթարկվելուն ստիպելը: Համաձայնությունը պետք է տրվի կամովին՝ անձի ազատ կամահայտնության հիման վրա, որպիսին պետք է գնահատվի վերաբերելի բոլոր հանգամանքներն իրենց ամբողջության մեջ դիտարկելու արդյունքում» (հոդված 36):
- **Հարկադիր ամուսնություն.** «չափահասին կամ երեխային ամուսնանալուն դիտավորությամբ հարկադրելը» (հոդված 37):
- **Կնոջ սեռական օրգանների խեղում.** «ա. սեռական մեծ և փոքր շուրթերը և կլիտորը լրիվ կամ մասնակի անդամահատելը, կապելը կամ խեղման այլ գործողությունների ենթարկելը; բ. (ա) կետում թվարկված գործողություններին ենթարկվելուն որևէ կնոջ ստիպելը կամ դրանց ենթարկվելու համար կին տրամադրելը; գ. (ա) կետում թվարկված գործողություններին ենթարկվելուն որևէ աղջկա ստիպելը, դրդելը կամ դրանց ենթարկվելու համար աղջիկ տրամադրելը» (հոդված 38):
- **Հղիության արհեստական ընդհատում և հարկադիր ամլացում.** «ա. կնոջ հղիության արհեստական դադարեցումը՝ առանց նրա կողմից նախապես և տեղեկացված կերպով տրված համաձայնության: բ. կնոջ կամ աղջկա բնականորեն վերարտադրելու կարողությունը կորցնելու նպատակով կամ դրան հանգեցրած վիրահատության կատարումը՝ առանց նրա կողմից նախապես և տեղեկացված կերպով տրված համաձայնության և պրոցեդուրայի իմաստը հասկանալու» (հոդված 39):
- **Սեռական հետապնդում.** «սեռական բնույթի խոսքային, ոչ խոսքային կամ ֆիզիկական գործողությամբ դրսևորվող ցանկացած վարքագիծ, որը նպատակ ունի խոցելու անձի արժանապատվությունը կամ հանգեցնում է դրան, մասնավորապես՝ ճնշող, թշնամական,

նվաստացուցիչ, նվաստացնող կամ վիրավորական մթնոլորտ ստեղծելը» (հոդված 40):

«Ֆիզիկական բռնություն» խումբը ներառում է թե՛ մահաբեր, թե՛ ոչ մահաբեր ֆիզիկական բռնությունը կանանց նկատմամբ՝ ինչպես պարզաբանված է Կոնվենցիայի Բացատրական զեկույցի մեջ (կետ 188):

Ստամբուլի կոնվենցիայի 42-րդ հոդվածում հիշատակված, թեպետ՝ որպես քրեական հանցագործություն ճանաչված չէ այն **հանցագործությունների գոյությունը, որոնք** կատարվում են այսպես կոչված «պատվի» համար. դրանք ներառված են ընդհանուր արգելքի մեջ, որով արգելվում է մշակույթը, սովորույթը, կրոնը, ավանդույթը կամ այսպես կոչված «պատիվը» դիտել որպես նման հանցավոր գործողությունների արդարացում: Այս ձևակերպման հիմքում այն ընկալումն է, որ այսպես կոչված «պատվի» համար կատարվող հանցագործությունները ոչ թե նոր, այլ՝ մեզ հայտնի հանցագործություններ են, ինչպիսիք են սպանությունը, անզգուշությամբ սպանությունը, մարմնական վնասվածք պատճառելը և այլն: Դրանք տարբերող գործոնը դիտավորությունն է (Եվրոպայի խորհրդի փաստաթերթ, 2012): Կոնվենցիայի 42-րդ հոդվածի համաձայն, այսպես կոչված «պատվի» համար կատարվող հանցագործությունները ներառում են այն բռնի գործողությունները, որոնք արդարացվում են՝ պնդելով, թե տուժողը խախտել է մշակութային, կրոնական, սոցիալական կամ ավանդական նորմերը կամ պատշաճ վարքի սովորույթները (Գենդերային հավասարության հանձնաժողով, 2016):

Մարդու թրաֆիքինգն ուղղակիորեն հիշատակված չէ այս Կոնվենցիայում, քանի որ կարգավորվում է առանձին պայմանագրով՝ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների մասին Եվրոպայի խորհրդի 2005 թվականի կոնվենցիայով:

Վարչական տվյալների, հետազոտական տվյալների և ուսումնասիրությունների համակարգումը

Տվյալների հավաքագրումն անհրաժեշտ է համակարգել, որպեսզի այն առավելագույնս արդյունավետ լինի: Ստամբուլի կոնվենցիայի 1-ին հոդվածն անդրադառնում է «համապարփակ դաշտ ձևավորելու» և «միասնական մոտեցման նպատակով արդյունավետորեն համագործակցելու» անհրաժեշտությանը: Տվյալների հավաքագրման համակարգումը 10-րդ հոդվածի համաձայն ստեղծվելիք պաշտոնական մարմինների պարտականություններից է: Այդ պաշտոնական մարմինների միջև համագործակցությունը կարող է օգնել նշված զարգացումներին: Ավելին, Կոնվենցիայի մասնակիցները պետք է Ստամբուլի կոնվենցիայի կատարման մոնիթորինգի համար պատասխանատու անկախ փորձագիտական մարմին (Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի միջոցառումների հարցերով փորձագիտական խումբ, ԳՐԵՎԻՈ, GREVIO[1]) տրամադրեն հավաքագրվող տվյալները և այլ տեղեկությունները՝ վերջինիս աշխատանքին աջակցելու համար:

Հավաքագրվող տվյալները պետք է լինեն վերաբերելի և համակարգված: Դրան

1. Ստեղծվել է Ստամբուլի կոնվենցիայի 66-րդ հոդվածի ուժով:

հասնելու լավագույն տարբերակն այն է, երբ տվյալների հավաքման խմբերը նույնն են, ինչ տուժողների պաշտպանության և բռնության կանխարգելման

ուղղությամբ աշխատող գերատեսչությունների կողմից կիրառվող խմբերը: Տվյալներն հավաքելու համար օգտագործվող գնահատման շրջանակի մեջ կիրառվող խմբերը պետք է համապատասխանեն պետական գերատեսչությունների միջամտությունների մշակման հայեցակարգային համակարգի խմբերին: Դա նշանակում է, որ վարչական տվյալները և հետազոտական տվյալները պետք է օգտագործեն նույն սահմանումները և չափման և գնահատման նույն միավորները: Դա ոչ միշտ է արվում, քանի որ տվյալների հավաքագրումը նախատեսված է կոնկրետ նպատակների համար, այլ ոչ՝ կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման համար ստեղծված միասնական համակարգի շրջանակում: Օրինակ, ոստիկանությունը և համանման կառույցները հավաքում են այն տվյալները, որոնք էական նշանակություն ունեն ոստիկանության համար, մինչդեռ գիտական շրջանակներն օգտագործում են իրենց տեսությունների համար անհրաժեշտ խմբեր և դասակարգումներ: Ստամբուլի կոնվենցիայի շրջանակում համագործակցելն հնարավորություն է ընձեռում հավաքել տվյալներ, որոնք էական նշանակություն ունեն կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերն արմատախիլ անելու ընդհանրական նպատակի տեսանկյունից, այլ ոչ՝ միայն առանձին գերատեսչությունների կոնկրետ նպատակներին հասնելու համար: Սահմանումները տրվում են կոնվենցիայում (մանրամասները տե՛ս վերևում): Ստորև ներկայացված են դասակարգման լրացուցիչ միասնական խմբերը:[2]

Հավաքվող տեղեկությունների դասակարգման խմբերը

- բռնության տեսակը
- Տուժողի սեռը (իմանալու համար, թե արդյոք բռնությունն ուղղված է կանանց դեմ) և իրավախախտի սեռը,
- Տուժողի և իրավախախտի միջև հարաբերությունները (իմանալու համար, թե արդյոք բռնությունը կատարվում է այնպիսի անձի կողմից, ում հետ տուժողն ունի ընտանեկան հարաբերություններ),
- Տուժողի տարիքը (իմանալու համար, թե արդյոք տուժողն անչափահաս է) և իրավախախտի տարիքը,
- Աշխարհագրական վայրը:

Համապարփակ հայեցակարգ ձևավորելու համար, որը կապահովի համագործակցությունն համապատասխան գերատեսչությունների միջև, տվյալներ անհրաժեշտ է հավաքել բոլոր փուլերում՝ օգտագործելով գնահատման ստորև նշված բոլոր երեք ցուցիչները.

- Տուժողների թիվը (և թե բնակչության քանի տոկոսն են տուժողներ),
- Դեպքերի (հանցագործությունների, միջադեպերի) թիվը (բնակչության թվի մեջ մասնաբաժինը),

2. Դասակարգման այդ խմբերն առաջարկվել են Ստամբուլի կոնվենցիայի Բացատրական զեկույցում, կետ 76:

- Իրավախախտների թիվը (բնակչության թվի մեջ մասնաբաժինը):

Ցանկալի է հավաքագրել նաև վերլուծությանն աջակցող հետևյալ լրացուցիչ տեղեկությունները.

- Հաշմանդամության վերաբերյալ տեղեկություններ,
- Այլ տեղեկություններ (օրինակ՝ միգրանտի կամ փախստականի կարգավիճակ ունենալը),
- Արդյոք բռնությունը տեղի է ունեցել նախորդ տարվա ընթացքում (կամ որևէ այլ ժամանակահատվածում, օրինակ՝ կյանքի ընթացքում):

Սովորական տվյալները Հանրությանն հասանելի տվյալները

Տվյալներ պետք է «հասանելի դարձնել հանրությանը» (հոդված 11.4): Տվյալները հավաքագրելը և կառավարական գերատեսչություններում կամ գիտական արխիվներում պահելը բավարար չէ: Տվյալները պետք է հասանելի դարձնել հանրությանը, որպեսզի դրանք հաշվի առնվեն հանրային բանավեճերում: Մեր օրերում դա նշանակում է՝ տվյալների տեղադրում բաց կայքէջում: Հանրության օգտակար լինելու համար պետք է տալ համապատասխան ամփոփումներ, օրինակ՝ ցուցանիշների ամփոփումներ: Փորձագետներին օգտակար լինելու համար անհրաժեշտ է ապահովել տվյալների շտեմարանների հասանելիությունը: Անհրաժեշտ է նաև ապահովել, որպեսզի հանրությանը տրամադրվող տվյալները ներառեն տեղեկություններ, որոնք կառնչվեն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության խնդիրներին: Ցանկալի է բոլոր էական տվյալներն համախմբել մեկ վայրում, որը դյուրամատչելի կլինի պրակտիկ աշխատողներին, քաղաքականություն մշակողներին և հանրությանը: Հաջորդ քայլը տվյալների համադրելիության ապահովումն է ինստիտուտների միջև, երկրի ներսում, ժամանակի մեջ, ցանկալի է նաև՝ պետությունների միջև:

Պետք է զգուշավորություն ցուցաբերել՝ տվյալներն հանրայնացնելիս չխախտելու համար անհատների անձնական գաղտնիքը: Դա նախատեսված է Ստամբուլի կոնվենցիայի 65-րդ հոդվածում (տվյալների պաշտպանությունը), որն հղում է անում Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիային (ETS No. 108): Դա նշանակում է, որ առնվազն պետք է այնպես անել, որ հանրությանը տրամադրվող տվյալների մեջ հնարավոր չլինի նույնացնել անհատների ինքնությունը:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ տվյալների հավաքագրումը և հետազոտությունները

Տվյալները պետք է հավաքագրել թե՛ վարչական եղանակով, թե՛ հետազոտություններով: Վարչական տվյալները սովորաբար հավաքագրվում են հանրային ծառայությունների ընթացիկ գործունեության շրջանակում, երբ բռնությունից տուժողները դիմում են օգնության համար: Ընդհանուր ազգաբնակչության հետազոտությունները թույլ են տալիս տեղեկություններ հավաքագրել այն մեծաթիվ տուժողների մասին, ովքեր ավելի քիչ են դիմում հանրային ծառայություններին կամ ավելի քիչ են օգտվում այդ ծառայություններից: Հետազոտություններն անհրաժեշտ են՝ հասկանալու համար այդ տվյալների բովանդակությունը, բացահայտելու համար կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության պատճառները և հետևանքները, և վերլուծելու համար ձեռնարկված միջոցների արդյունավետությունը: Մեղադրական դատավճիռների կայացման ցուցանիշները Կոնվենցիայում ուղղակիորեն հիշատակված են՝ հետազոտման ենթակա թեմաների շարքում: Բացի դրանից, տվյալների հավաքագրման ժամանակ պետք է չմոռանալ անձնական գաղտնիքը պաշտպանելու անհրաժեշտությունը:

Վարչական տվյալները

Կանանց նկատմամբ բռնությունից և ընտանեկան բռնությունից տուժող անձանց օգնող բոլոր գերատեսչությունները պետք է հավաքագրեն վերաբերելի տվյալներ: Դա անհրաժեշտ է՝ ձևավորելու համար գիտելիքի բազա թե՛ ծառայությունները բարելավելու, թե՛ բռնությունն արմատախիլ անելու նպատակով: Վարչական տվյալներ կանոնավոր կերպով հավաքագրվում են այն գերատեսչությունների

կողմից, որոնց հետ կոնտակտի մեջ են մտնում բռնությունից տուժող անձինք՝ ձգտելով հասնել արդարադատության, ստանալ բուժօգնություն կամ խորհրդատվություն, կամ կացարանային կամ այլ աջակցություն: Մի շարք կառույցներ և կազմակերպություններ են դրանով զբաղվում՝ ներառյալ հանրային և մասնավոր բուժօգնություն տրամադրողները, սոցիալական պաշտպանության ծառայությունները, իրավապահ մարմինները, հասարակական կազմակերպությունները, դատական մարմինները և դատախազները:
Թեպետ գերատեսչությունները և կազմակերպություններն արդեն իսկ սովորաբար հավաքագրում են որոշ տվյալներ, լրացուցիչ քայլեր կարող են անհրաժեշտ լինել վերաբերելի տվյալները ձեռք բերելու համար: Դա կարող է ներառել տվյալների այնպիսի համակարգերի ստեղծումը, որոնք չեն սահմանափակվի գերատեսչության կողմից սեփական կարիքների համար նախկինում հաշվառվող ներքին տվյալներով: Վերը նշված տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման նպատակով, կարող են ենթադրել արդեն իսկ հավաքագրվող տեղեկություններից զատ՝ նաև այլ տեղեկությունների հավաքագրում:

Մի քանի ուսումնասիրություններում ներկայացված են վարչական տվյալների հավաքագրման լավագույն փորձի օրինակներ: Դրանցից են, մասնավորապես, Եվրոպայի խորհրդի 2006 թվականի գույքագրման ուսումնասիրությունը (Եվրոպայի խորհուրդ, 2006), Կանանց նկատմամբ բռնությանն առնչվող վարչական տվյալների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի ուսումնասիրությունը (Եվրոպայի խորհուրդ, 2008a), Թիվ Rec(2002)5 հանձնարարականի կատարման մասին Եվրոպայի խորհրդի մոնիթորինգային զեկույցները (Եվրոպայի խորհուրդ, 2014b), Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտի ուսումնասիրությունը վարչական տվյալների վերաբերյալ (EIGE 2014a), Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտի ուսումնասիրությունը ԵՄ անդամ պետություններում տուժողներին մասնագիտական ծառայությունների մատուցման մասին (EIGE 2012) և ԵՄ համապատասխան օրենսդրության վերաբերյալ Եվրոպական հանձնաժողովի ուսումնասիրությունը (Եվրոպական հանձնաժողով, 2010): Այդ ուսումնասիրություններում խորհուրդ է տրվում տվյալների տարբեր համախմբեր հավաքագրել տարբեր կառույցների կողմից, ինչպիսիք են ոստիկանությունը, դատախազությունը, դատարանները, առողջապահական մարմինները, սոցիալական ծառայությունները և աջակցման մասնագիտական ծառայությունները: Թեպետ առաջարկները ոչ ամբողջությամբ են ներդաշնակեցված, այդ ուսումնասիրություններում ներառված օրինակելի մոտեցումները կարող են ուղղորդող նշանակություն ունենալ Ստամբուլի կոնվենցիայի համաձայն տվյալների հավաքագրումն համակարգող պաշտոնական մարմինների համար: Օրինակ, ընտանեկան բռնության վերաբերյալ վարչական տվյալների հավաքագրման մասին Եվրոպայի խորհրդի ուսումնասիրության մեջ առաջարկվել է, որպեսզի առնվազն ոստիկանությունը, դատախազությունը, առաջին ատյանի դատարանները (քրեական և քաղաքացիական), պաթանատոմիական ծառայությունները, առողջապահական ծառայությունները և սոցիալական ծառայություններն հավաքագրեն հետևյալ տվյալները. տարբերակել ընտանեկան բռնության դեպքերն այլ դեպքերից, տուժողի սեռը և իրավախախտի սեռը, տուժողի տարիքը և իրավախախտի տարիքը, տուժողի և իրավախախտի հարաբերությունները, բռնության տեսակը:

Բացի դրանից, ոստիկանությունը, դատախազությունը և դատարանները պետք է տվյալներ հավաքագրեն գործերի վերջնարդյունքների վերաբերյալ:

Քրեական արդարադատության համակարգը կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ տվյալների կարևորագույն աղբյուրներից է Եվրոպայի խորհրդի անդամ պետություններից շատերում: Կոնվենցիայով սահմանվում են կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը, ինչպես նաև՝ բռնության 9 այլ ձևեր՝ կիրառելով նյութական իրավունքի ձևակերպումներ: Այսպես կոչված «պատվի» համար կատարվող հանցագործությունը չեն ներառվում, քանի որ ընդհանուր առմամբ արգելվում է մշակույթը, սովորույթը, կրոնը, ավանդույթը կամ այսպես կոչված «պատիվը» դիտել որպես որևէ հանցավոր գործողությունների արդարացում: Այդ սահմանումները կարող են ընդհանուր դասակարգման խմբեր համարվել թե՛ քրեական արդարադատության համակարգի, թե՛ տարաբնույթ ծառայությունների մասին տվյալներ հավաքագրելու համար (տե՛ս վերևում):

Առողջության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) մշակել է հիվանդությունների դասակարգում՝ առողջապահական ծառայությունների վարչական վիճակագրության մեջ օգտագործման համար: ԱՀԿ-ի Հիվանդությունների միջազգային դասակարգումը (International Classification of Diseases, ICD, WHO 2014) ներառում է դիտավորությամբ պատճառված մարմնական վնասվածքների ծածկագրերը՝ կոդերը: Դա անհրաժեշտ կլինի համադրել լրացուցիչ տեղեկությունների (տուժողի սեռը և տուժողի և իրավախախտի հարաբերությունները) հետ, որպեսզի հնարավոր լինի ստանալ Կոնվենցիայով պահանջվող տեղեկությունները: Տուժողի (որպես պացիենտի) սեռի մասին տեղեկությունը որպես կանոն հավաքագրվում է առողջապահական ծառայությունների կողմից, սակայն ի տարբերություն ոտնձգության կատարման վայրի, որը երբեմն արձանագրվում է որպես «ընտանիքում» կատարված ոտնձգություն, տուժողի և իրավախախտի ունեցած հարաբերությունների մասին տեղեկությունները չեն արձանագրվում:

Հետևյալ օրինակների օգնությամբ նկարագրվում են Իսպանիայի և Դանիայի հաջողված փորձի զարգացումները:

Իսպանիա[3]

Իսպանիայում հավաքագրվում են վերաբերելի վարչական տվյալներ, և լուրջ քայլ է կատարվել տվյալների միասնականության ապահովման ուղղությամբ՝ ձևավորելով տվյալների պահպանման նոր համակարգ: Ընտանեկան և գենդերով պայմանավորված բռնությունից տուժող անձանց պաշտպանության կենտրոնական ռեգիստրը (Instituto Nacional de Estadstica 2014) մեկտեղում է վերաբերելի վարչական տվյալները: Ռեգիստրը ձևավորվել է գենդերով պայմանավորված դեմ պայքարի ընդհանուր շարժման շրջանակում, որը ներառել է նաև այս ոլորտում համակարգման, վերլուծության և քաղաքականության մշակման համար պատասխանատու «Դիտակենտրոնի» (Ընտանեկան և գենդերային բռնության դեմ պայքարի դիտակենտրոն) ստեղծումը:

3. Իսպանիայի վերաբերյալ տեղեկությունների ձեռք բերման հարցում օգնելու համար երախտագիտություն ենք հայտնում Ջուդ Թաուերսին:

Ռեգիստրը գտնվում է Արդարադատության նախարարությունում: Այն տվյալներ է պարունակում բռնի հանցագործությունների երկու տեսակների՝ գենդերով պայմանավորված բռնության և ընտանեկան բռնության մասին: Այն տեղեկություններ է պարունակում տուժողի մասին (այդ թվում՝ սեռը, տարիքը և հարաբերությունը մեղադրյալի հետ), մեղադրյալի մասին, պատժելի հանցագործության, կատարման վայրի և միջանկյալ միջոցների (օրինակ՝ պաշտպանության կարգադրության) և վերջնական դատական ակտերի մասին: Ազգային վիճակագրական ինստիտուտը (INE) երկու տեսակի տվյալներ է հավաքում՝ պաշտպանության կարգադրությունների և վերջնական դատական ակտերի մասին, որոնք ստանում է Արդարադատության նախարարությունից: Տվյալներն հավաքվում են տարեկան կտրվածքով, ողջ Իսպանիայի համար: Գործնական ընթացակարգն այսպիսին է. Արդարադատության նախարարությունը տարին մեկ անգամ INE-ին է ուղարկում այդ տեղեկությունները պարունակող հինգ ֆայլերը: INE-ն ստուգում է սխալների առկայությունը և տեղեկությունների դասակարգումն ըստ Քրեական օրենսգրքի համապատասխան գլխի և հոդվածի:

Դանիա[4]

Դանիան քայլ է կատարել վարչական տվյալների միասնականության ապահովման ուղղությամբ՝ մեկտեղելով համապատասխան վիճակագրությունը մի շարք ռեգիստրներում, և վերջիններս կապակցելով նույնականացման համարների հետ (Statistics Denmark): Այդ կապակցումն հնարավոր է դարձրել վարչական տարբեր համակարգերի միջոցով միևնույն անձի կենսափորձին հետևելը՝ կիրառելով անձի չկրկնվող նույնականացման համարը: Ռեգիստրները կապակցելու միջոցով ստեղծված շտեմարանները պահվում են Դանիայի վիճակագրական ծառայությունում (Statistics Denmark), և հետազոտողները կարողանում են համացանցում ծանոթանալ շիֆրավորված, անանունացված տվյալների համախմբերի հետ, որոնցում հնարավոր չէ պարզել անհատների ինքնությունը: Դանիան վարչական վիճակագրություն ունի բռնությունից տուժող անձանց կողմից հանրային ծառայություններից օգտվելու վերաբերյալ. այդ վիճակագրությունն հավաքվում է մի շարք ռեգիստրների մեջ: Վերջիններս ներառում են վիճակագրություն հանցագործության մասին (ոստիկանությունն արձանագրում է տվյալներ հանցագործությունների և կայացված դատական ակտերի մասին), հիվանդանոցների պացիենտների մասին, մահվան պատճառների և ապաստարանից օգտվելու փաստի մասին:

Հանցավորության մասին տվյալները

Հանցավոր արարքների վերաբերյալ վիճակագրական տվյալները ստացվում են ոստիկանության նյութերից և զետեղված են Հանցագործությունների ռեգիստրի և Տուժողների վիճակագրության մեջ, որոնք վարչական վիճակագրության կարգով համատեղ վարում են Դանիայի վիճակագրական ծառայությունը (Statistics Denmark) և Ոստիկանությունը: Ոստիկանության վարչական համակարգը (POL-SAS), որը գործում է 2001 թվականից, համակցում է տեղեկություններն հանցագործության մասին (քրեական օրենսգրքի հոդվածը), իրավախախտի

4. Դանիայի վերաբերյալ տեղեկությունների ձեռք բերման հարցում օգնելու համար երախտագիտություն ենք հայտնում Քերին Հելվիգ-Լարսենին:

մասին (տարիքը և սեռը) և տուժողի մասին (տարիքը և սեռը)՝ ըստ տուժողի և իրավախախտի անձնական նույնականացման համարի: POL-SAS համակարգը վերաբերում է միայն միջանձնային բնույթի հանցագործություններին, ինչպիսիք են բռնությունը, բռնաբարությունը և ավազակությունը, և չի ներառում գողությունը: Հանցագործությունների ռեգիստրները տվյալներ են պարունակում նաև դատարանների կայացրած դատական ակտերի մասին և թարմացվում են մեղադրանքների մեջ կատարվող փոփոխություններին համապատասխան՝ ըստ քննությունների և դատական վարույթների:
Ինչ վերաբերում է կանանց նկատմամբ բռնությանը, ապա քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներն են §237-ը (սպանություն), §244-ը (ոչ մեծ ծանրության բռնություն), §245-ը (ծանր բռնություն), §246-ը (առանձնապես ծանր բռնություն, որը սովորաբար մշտական վնաս է պատճառել տուժողին) և §§216-217-ը (բռնաբարություն): Թեպետ քրեական օրենսգրքում չկան կոնկրետ նորմեր, որոնք վերաբերում են հենց ընտանեկան բռնությանը, հնարավոր է նույնացնել ընտանեկան բռնության դեպքերը՝ կապակցելով ռեգիստրների այն տվյալները, որոնք վերաբերում են բնակության վայրին՝ կապելով անձնական նույնականացման համարներով, որի արդյունքում հնարավոր է լինում պարզել, թե արդյոք եղել են հարաբերություններ տուժողի և իրավախախտի միջև, կամ օրինակ՝ թե արդյոք նրանք ինչ-որ փուլում բնակվել են միևնույն հասցեով: Այնուհանդերձ, թեպետ միևնույն հասցեով բնակվելը կարող է վկայել ընտանեկան հարաբերությունների առկայության մասին, դա ոչ միշտ է այդպես, ուստի՝ այդ կերպ հնարավոր չէ հանցագործությունների վիճակագրության հիման վրա միանշանակորեն համոզվել, որ գոյություն են ունեցել կամ գոյություն ունեն ընտանեկան հարաբերություններ:

Հիվանդանոցների պացիենտները

Դանիայի պացիենտների ազգային ռեգիստրը պարունակում է վարչական վիճակագրություն, որն օգտագործվում է առողջության մոնիթորինգի և ծառայությունների պլանավորման նպատակով: Ռեգիստրում գրանցվում են հիվանդանոցից դուրս գրման բոլոր դեպքերը՝ ըստ պացիենտի անձնական նույնականացման համարի: Տեղեկատվության ծավալը ժամանակի ընթացքում ավելացել է: 1977 թվականից սկսած ռեգիստրը տեղեկություններ է ներառում նաև բոլոր սոմատիկ պացիենտների դուրս գրման վերաբերյալ, իսկ 1995 թվականից՝ նաև ամբուլատոր պացիենտների վերաբերյալ, այդ թվում՝ ամբուլատոր խնամքի ծառայություններից, շտապ օգնության ծառայություններից և հոգեբուժական բաժանմունքներից: Ռեգիստրը տեղեկություններ է պարունակում մնալու տևողության, սեռի և տարիքի, կլինիկական վիճակի, այդ թվում՝ ընդունման պատճառի մասին (հիվանդություն, վթար, բռնություն, ինքնավնասում, վնասվածքի հետևանք), ինչպես նաև ախտորոշումների և ընթացակարգերի մասին: Բռնության հետևանքով հիվանդանոց ընդունվող բոլոր անձանց ինքնությունը հնարավոր է պարզել, քանի որ ընդունման պատճառի արձանագրումը ներառում է նաև բռնությունը/դիտավորությամբ պատճառված մարմնական վնասվածքը: Տվյալները ներառում են տեղեկություններ դեպքի տեղի ունենալու վայրի մասին (այդ թվում՝ թե արդյոք դա եղել է բնակության վայր) և այն մասին, թե ինչպես է մարմնական վնասվածքը պատճառվել, ինչպես նաև՝ թե վնասվածքը ստանալու պահին ինչով է զբաղված եղել պացիենտը:

Այնուհանդերձ, չի արձանագրվում տեղեկություն իրավախախտի հետ պացիենտի հարաբերությունների մասին: Մարմնական վնասվածքների բուն բնույթը կոդավորվում է ըստ ԱՀԿ-ի ICD 10 (International Classification of Diseases, 10th revision) դասակարգման: Դա նշանակում է, որ առկա են տվյալներ կանանց նկատմամբ բռնության մասին, բայց ոչ՝ կոնկրետ ընտանեկան բռնության մասին:

Մահվան պատճառը

Դանիայի մահացության վիճակագրությունը ներառում է Դանիայում մշտական հիմունքներով բնակվող անձանց շրջանում Դանիայում տեղի ունեցող մահվան բոլոր դեպքերը: Ռեգիստրի տեղեկությունները ձևավորվում են մահվան վկայականների հիման վրա և ներառում են տեղեկություններ մահվան ձևի (հիվանդություն, վթար, ինքնասպանություն կամ բռնություն) և մահվան պատճառի, այսինքն՝ մահվան պատճառ հանդիսացած հիվանդության կամ մարմնական վնասվածքի մասին: Բոլոր տվյալներն արձանագրվում են ըստ մահացածի անձնական նույնականացման համարի:

Ապաստարանները

Դանիան համակարգված տվյալներ ունի ընտանեկան բռնությունից փախչող անձանց կողմից ապաստարաններից օգտվելու դեպքերի վերաբերյալ: Պետական ֆինանսավորմամբ գործող 46 ապաստարաններ Ծեծված կանանց և նրանց երեխաների ապաստարանների ազգային կազմակերպության (LOKK) հովանու ներքո խորհրդատվություն և ժամանակավոր կացարան են առաջարկում հիմնականում ընտանեկան բռնությունից տուժած կանանց: Կոնտակտի յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ տեղեկություններն հավաքագրվում են մեկ էջանոց հարցաշարում, որը լրացվում է առաջին անգամ ապաստարանի հետ առնչվելիս: Վեց էջից բաղկացած լրացուցիչ հարցաշարը լրացվում է, եթե կինը ցանկություն է հայտնում մնալ ապաստարանում: Տվյալներն արձանագրվում են ըստ կնոջ անձնական նույնականացման համարի: Շիֆրավորված տվյալները կարող են կապակցված լինել տվյալների այլ աղբյուրների, օրինակ՝ Պացիենտների ազգային ռեգիստրի և Դանիայի վիճակագրական ծառայության (Statistics Denmark) բնակչության տարբեր ռեգիստրների հետ: Հետազոտությունների տվյալները վերլուծվում են Դանիայի սոցիալական հարցերի նախարարարության Սոցիալական ծառայությունների հետազոտությունների կենտրոնի կողմից: Տարեկան զեկույցները տեղադրվում են LOKK-ի կայքէջում:

Հետազոտությունների տվյալները

Հետազոտությունները բռնությունից տուժած անձանց մասին տեղեկությունների կարևոր աղբյուր են, քանի որ տուժողների մեծ մասն օգնության համար չի դիմում տարբեր գերատեսչությունների, ուստի՝ նրանց տվյալները չեն ներառվում վարչական վիճակագրության մեջ: Միայն հետազոտություններն են թույլ տալիս ներկայացուցչական տեղեկություններ ստանալ բռնությունից տուժող անձանց այն զգալի մասի վերաբերյալ, ովքեր չեն դիմում օգնության: Միայն հետազոտություններով է հնարավոր պարզել, թե արդյոք բռնության ցուցանիշն ավելանում է թե նվազում, քանի որ պետական մարմիններից օգնություն հայցող

անձանց մասնաբաժինը կարող է կախված լինել թե՛ պետական մարմիններին դիմելու՝ տուժողների պատրաստակամությամբ, թե՛ դիմողների թվերն արձանագրելու՝ իրավասու մարմինների ցանկությամբ, սակայն՝ չարտացոլել բռնության իրական մակարդակը:

Կոնվենցիան մասնակից պետություններից պահանջում է ձեռնամուխ լինեն կանոնավոր պարբերականությամբ անցկացնելու բնակչությունն ընդգրկող հետազոտություններ՝ սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի տարածվածությունն ու զարգացման տենդենցները գնահատելու համար (հոդված 11.2): Կանոնավոր պարբերականությամբ հետազոտություններ անցկացնելու պահանջը սահմանվել է՝ ժամանակի ընթացքում փոփոխությունների բնույթը պարզելու համար:

Համապատասխան վիճակագրություն և ցուցանիշներ ստանալու նպատակով կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության հետազոտություններ անցկացնելու լավագույն եղանակներին նվիրված ուսումնասիրություններ են իրականացվել (Walby 2005; Walby and Myhill 2001): Կազմվել են ուղեցույցներ, որոնցում նկարագրված են գործնականում անհրաժեշտ տեխնիկական մանրամասները, մասնավորապես՝ Կանանց նկատմամբ բռնության վիճակագրության պատրաստման ուղենիշները. վիճակագրական հետազոտություններ (Guidelines for Producing Statistics on Violence against Women: Statistical Surveys) ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական հարցերի վարչության կողմից (2014): Հետազոտությունների մշակման և անցկացման հարցերում լուրջ նորարարություններ են կատարվել, այդ թվում՝ ԱՀԿ-ի Կանանց առողջության և կանանց նկատմամբ ընտանեկան բռնության բազմապետական ուսումնասիրությունը (Multi-country Study on Women's Health and Domestic Violence against Women) (WHO 2005), HEUNI-ի կանանց նկատմամբ բռնության միջազգային հետազոտությունները (International Violence against Women Surveys) (HEUNI 2013) և Եվրամիության հիմնարար իրավունքների գործակալության կանանց նկատմամբ բռնության հետազոտությունները (EU Fundamental Rights Agency Violence against Women Survey), որոնք կատարվում են ողջ Եվրամիությունում (FRA 2014), ինչպես նաև Եվրոպայի խորհրդի մի շարք անդամ պետություններում, այդ թվում՝ ՄԹ-ում և Դանիայում (տե՛ս ստորև):

Պետք է անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հիմնական մարտահրավերներին. ինչպես ձևավորել բնակչության բավականաչափ մեծ և ներկայացուցչական ընտրանք՝ գործելով ծախսային սահմանափակումների պայմաններում, ինչպես ապահովել տվյալների կանոնավոր հավաքագրումը, որպեսզի գնահատվեն ժամանակի ընթացքում կատարվող փոփոխությունները՝ գործելով ծախսային սահմանափակումների պայմաններում, ինչպես ապահովել բռնության դեպքերի մասին հայտնելու հետևողական պատրաստակամությունը, որը չի տարբերվի սոցիալական խմբերի և պետությունների միջև, ինչպես ապահովել հետազոտության մեջ կիրառվող դասակարգումների (սահմանումների և չափման միավորների) համապատասխանությունը վարչական եղանակով հավաքագրվող տվյալների դասակարգումների հետ՝ ձևավորելու համար տվյալների համահունչ համակարգ, ինչպես ապահովել հարցազրուցավարների լիարժեք վերապատրաստումը և ինչպես ապահովել դասակարգումների (սահմանումների և չափման միավորների) միջազգային համադրելիությունը:

Դրանք լուրջ մարտահրավերներ են, և այդ պահանջներին համապատասխանող պետությունների թիվը ներկայումս փոքր է: Դրանք կարող են լուծվել քայլ առ քայլ՝ աստիճանական բարելավումներով կամ պրակտիկայի մասշտաբային վերանայմամբ և փոփոխությամբ: Բազմաթիվ պետություններ են միանգամյա մասնագիտացած հետազոտություններ կատարել՝ նպատակ ունենալով պարզել կանանց նկատմամբ բռնության մասշտաբը, և հետազոտությունների արդյունքում արողացել են բարձրացնել իրազեկության մակարդակը:[5] Այդ պրակտիկան անհրաժեշտ է ամրապնդել՝ կանոնավոր կերպով հավաքագրվող տվյալների միջոցով բարելավելով քաղաքականությունների մշակումը:

Իտալիան այն սակավաթիվ երկրներից է, որոնք կանանց նկատմամբ բռնության մասնագիտացած հետազոտությունը կրկնել են: Առաջին հատուկ հետազոտությունն իրականացվել է 2006 թվականին, հաջորդը՝ 2014 թվականին: Հետազոտությունը կատարվել է Ազգային վիճակագրական գրասենյակի (ISTAT) կողմից: ISTAT-ի կանանց նկատմամբ բռնության հետազոտության շրջանակում տվյալներ են հավաքագրվում զուգընկերների և զուգընկեր չհանդիսացող անձանց միջև կանանց նկատմամբ բռնության դեպքերի տարբեր ձևերի տարածվածության և առանձնահատկությունների, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական, հոգեբանական և տնտեսական բռնության մասին: Տվյալներ են հավաքագրվում տուժողների՝ օգնության դիմելու փաստերի և հաղորդում չներկայացնելու պատճառների մասին, ինչպես նաև կանանց նկատմամբ բռնության հետևանքների, ռիսկերի, պաշտպանության գործոնների և ծախքերի մասին: Հետազոտությունը կատարվում է 16-ից 70 տարեկան 25,000 կանանց ընտրանքի շրջանում: 2014 թվականին հետազոտությունը ներառել է նաև Իտալիայում բնակվող վեց հիմնական ազգությունների (ովքեր չունեն քաղաքացիություն) ներկայացուցիչների (ռումինացի, ուկրաինացի, ալբանացի, մորոկկացի, մոլդովացի և չինացի): Հետազոտությունն իտալուհիների պարագայում կատարվել է հեռախոսով՝ օգտագործելով համակարգիչներ (CATI), իսկ քաղաքացիություն չունեցող կանանց պարագայում՝ անմիջական հարցազրույցների ձևով: ISTAT-ը մտադիր է հատուկ հետազոտությունը կրկնել որոշակի պարբերականությամբ, առնվազն չորս տարին մեկ անգամ:[6]

Թեպետ տվյալները կարող են հավաքագրվել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության թեմայով անցկացվող մասնագիտացած հետազոտությունների միջոցով, այն պետությունները, որոնք բարեհաջող և կանոնավոր կերպով հետազոտական տվյալներ են ձեռք բերել, դա արել են՝

5 Կանանց բռնությունից պաշտպանության մասին Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված թիվ Rec(2002)5 հանձնարարականի կատարման մոնիթորինգի 4-րդ շրջափուլի (2014) ընթացքում Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետություններից 21-ն հայտնել են, որ իրականացրել են ներկայացուցչական ազգային հետազոտություն՝ անդրադառնալով կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերի տարածվածությանը: Այդ 21 պետություններից 6-ը կրկնել են կանանց նկատմամբ բռնության թեմայով իրենց նախաձեռնած հատուկ հետազոտությունները: Որոշ երկրներ (Չեխիան և Ֆինլանդիան) նշել են երեք նման հետազոտություններ անցկացնելու ժամկետները:

6 Իտալիայի հետազոտության վերաբերյալ տեղեկությունները տրամադրել է Իտալիայի Ազգային վիճակագրական գրասենյակի ներկայացուցիչ Մարիա Զուզեպինա Մուրատորեն՝ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ տվյալների հավաքագրումը. ընթացքը Ստամբուլի կոնվենցիայի պահանջների կատարման ուղղությամբ» խորագրով միջազգային կոնֆերանսի ընթացքում (Կիև, Ուկրաինա, 3-4 սեպտեմբերի, 2015 թ.):

համապատասխան հարցեր ներառելով նաև այլ հետազոտության մեջ, որը միացվել է մասնագիտացած հետազոտությանը կամ անցկացվել է կից մոդուլի ձևով: Այդկերպ կրճատվում են հետազոտական տվյալներ ստանալու ծախսերը: Ամենամյա տվյալներ տրամադրող հետազոտությունները, որոնց հիման վրա հնարավոր է վերլուծել փոփոխությունները ժամանակի ընթացքում, առնվազն Եվրոպայում ներառված են եղել ավելի համապարփակ հետազոտությունների մեջ, որոնք վերաբերել են հատկապես հանցավորության կամ առողջության խնդիրներին: Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ լրացուցիչ հարցերի ներառումը նույնչափ թանկ չէ, որքան առանձին հետազոտություն կազմակերպելը: Եվրոպայի որևէ երկիր չի կարողացել ներգրավել այն ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են կանանց նկատմամբ բռնության մասնագիտացած հետազոտությունները որոշակի պարբերականությամբ միևնույն մեթոդաբանությամբ և հարցերով անցկացնելու համար: Անգամ եթե մեկից ավելի մասնագիտացած հետազոտություն է իրականացվել, դրանցում տարբեր մեթոդաբանություններ են կիրառվել, ինչի հետևանքով ժամանակի մեջ արվող համեմատություններն անհնար են դարձել:

Եզրակացությունն այն է, որ որոշակի պարբերականությամբ հետազոտությունը կրկնելու համար անհրաժեշտ ռեսուրսներ ներգրավելն այնպիսի ծանր մարտահրավեր է, որ ներկայումս ավելի լավ կլինի, եթե պետությունները տվյալ խնդիրներին վերաբերող հարցերը ներառեն իրենց կողմից արդեն իսկ կանոնավոր կերպով անցկացվող հետազոտությունների մեջ: Եվրոպայում դրանք թերևս առողջության կամ հանցավորության խնդիրներին նվիրված հետազոտություններն են:

ՄԹ հետազոտությունները

Անգլիայի և Ուելսի հանցավորության մասին հետազոտությունների (Crime Survey for England and Wales, CSEW) միջոցով ամեն տարի տվյալներ են ստացվում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության մասին: Դրանք ստացվում են նախորդ տարվա ընթացքում ֆիզիկական անձանց և տնային տնտեսությունների շրջանում տեղի ունեցած հանցագործությունների հետազոտությունների համատեքստում:
Հետազոտությամբ տվյալներ են ստացվում տուժողների և բռնի հանցագործությունների մասին: Տուժողներին վերաբերող տվյալները բացված են ըստ տուժողի սեռի և ըստ հանցագործության՝ ընտանեկան հարաբերությունների շրջանակում (մերձավոր զուգընկերոջ կամ ընտանիքի այլ անդամի կողմից) կատարվելու հանգամանքի: Ներառում է տարիքը և կարգավիճակի այլ էական գործոնները, ներառյալ՝ ազգությունը, կրոնը և հաշմանդամությունը: Հետազոտության հիմնական հարցաշարը տվյալներ է տալիս բռնի հանցագործությունների թվի և բնույթի մասին: Հիմնական հարցաշարի միջոցով հավաքվող տեղեկությունները կոդավորվում են ըստ ՄԹ հանցագործությունների դասակարգման՝ կոդավորող փորձագետների կողմից: Անձի նկատմամբ բռնության (ծանր մարմնական վնասվածք, այլ մարմնական վնասվածք և հարձակում) վերաբերյալ տեղեկությունները դասակարգվում են նաև ըստ տուժողի և իրավախախտի հարաբերությունների բնույթի (ընտանեկան հարաբերություններ, ծանոթ անձնավորություն կամ անծանոթ):

CSEW-ն 1980-ականների կեսերին գործունեությունն սկսելուց ի վեր ժամանակային ընդգրկուն շարքեր է պատրաստել, որոնք 2000 թվականից սկսած կազմվում են տարեկան կտրվածքով: Դա նշանակում է, որ ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության թեմայով աշխարհում անցկացվող հետազոտությունների շարքում այն ամենահներից է: Հետազոտությունը սկզբում կոչվում էր Բրիտանիայի հանցագործությունների հետազոտություն (British Crime Survey) (Անգլիային և Ուելսին բաժին է ընկնում ՄԹ բնակչության 89%-ը): Վերջերս այն անվանափոխվել է՝ արտացոլելով կառավարման համակարգի կառուցվածքային փոփոխությունը ՄԹ-ում: Տվյալներն օգտագործվել են գենդերով պայմանավորված բռնության վերլուծությունների մեջ (Walby et al. 2014), ներառյալ՝ բռնության ծախքերի ուսումնասիրությունները (Walby 2004):

Հետազոտությունը կազմված է երկու մասից. հիմնական հարցաշար և ինքնուրույն լրացվող մոդուլ: Հիմնական հարցաշարը (որի արդյունքները նկարագրված են վերևում) լրացվում է անմիջական հարցազրույցի միջոցով: Ինքնուրույն լրացվող մոդուլի մեջ հարցվողը հարցերի պատասխանները լրացնում է լափթոփ-համակարգչում գաղտնի ձևով կամ՝ անմիջականորեն դրանք հաղորդում է հարցազրուցավարին (Walby and Allen 2004): Ընտանեկան բռնության, սեռական ոտնձգությունների և հետամտման վերաբերյալ ինքնուրույն լրացվող մոդուլի միջոցով հաղորդվող՝ ընտանեկան բռնության դեպքերի թիվը շատ ավելի մեծ է. այն մոտ քառակի գերազանցում է հիմնական հարցաշարի միջոցով հաղորդվող դեպքերի թիվը:

CSEW-ն բարձրորակ հետազոտություն է, որին պատասխանելու ցուցանիշը բավական բարձր է: Բոլոր հարցվողների նկատմամբ դրսևորվում է միևնույն մոտեցումը: Հետազոտությունը ծավալուն է՝ ընդգրկելով մոտ 40,000 հարցվողների (թիվը տարեցտարի աննշան փոխվում է): Ընտրանքը կազմվում է համալիր եղանակով՝ ապահովելով ներկայացուցչականությունը, ինչպես նաև տվյալների հավաքագրումը որոշակի նպատակների համար, օրինակ՝ ոստիկանական ծառայության յուրաքանչյուր ոլորտի մասին առանձին: Հետազոտությունը սկզբում վարում էր Ներքին գործերի նախարարություն, իսկ ներկայումս՝ Ազգային վիճակագրության ծառայությունը: Դաշտային աշխատանքները պատվիրակվում են հետազոտական մասնավոր ընկերության, որը կոչվում է TNS BMRB:

CSEW-ի հետազոտության վերաբերյալ մանրակրկիտ տեղեկություններ անվճար հասանելի են CSEW-ի կայքէջում՝ ներառյալ ամփոփ տեղեկություններ (ONSa), տեխնիկական օգտագործողների ուղեցույցներ (ONSb), լիարժեք հարցաշար (ONSc) և տարեկան ամփոփումներ (ONSd):

Դանիայի հետազոտությունները

Դանիայում անցկացվում են բնակչության հետազոտություններ, որոնք ներառում են հարցեր կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության մասին: Համապատասխան հարցերը 2000 թվականից ներառվել են Առողջության ազգային հարցազրույց-հետազոտության (NHIS) մեջ, որն անցկացվում է կանոնավոր պարբերականությամբ:
Հարցերը վերաբերում են ֆիզիկական ուժի գործադրմանը, բռնության սպառնալիքներին և սեռական բռնությանը, ինչպես նաև տուժողի սեռին և

տուժողի և բռնարարի՝ հարաբերություններ ունենալու հանգամանքին: Հարցեր կան այն մասին, թե արդյոք նախորդ տարվա ընթացքում բռնարարն անձին հրել է, թափահարել կամ ապտակել, աքացի տվել, հարվածել բռունցքով կամ առարկայով, նրան նետել կահույքի, պատերի ուղղությամբ, աստիճաններով ներքև և այլն, կամ՝ արդյոք բռնարարը փորձել է խեղդել կամ զինված հարձակման ենթարկել նրան, կամ՝ գործադրել է արդյոք բռնության այլ ձև կամ սեռական բնույթի գործողություններ առանց տուժողի համաձայնության:

Առողջության կանոնավոր հետազոտության միջոցով բռնության վերաբերյալ հարցեր ուղղելու մեթոդը թույլ է տալիս տվյալների հավաքագրումը դարձնել կայուն, ծախսարդյունավետ և երկարաժամկետ, ինչի շնորհիվ հնարավոր է դառնում շարունակել ժամանակի ընթացքում վերլուծել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության միտումները: Առողջության ազգային հարցազրույց-հետազոտության (NHIS) նպատակն է տեղեկություններ ստանալ դանիացիների առողջության և հիվանդացության, ինչպես նաև նրանց առողջության և հիվանդացության վրա ազդող գործոնների մասին: Բռնությունը ներառված է, քանի որ այն էական բացասական ազդեցություն ունի առողջության վրա:

Դանիայում նախկինում (1970-ականներից սկսած) անցկացվել են մի շարք այլ մասնագիտացած հետազոտություններ՝ նվիրված կանանց նկատմամբ բռնության խնդիրներին: Այնուամենայնիվ, ինչպես և բազմաթիվ այլ պետություններում, այդ մասնագիտացած հետազոտությունների մեթոդաբանությունը և շրջանակը յուրաքանչյուր անգամ տարբերվել է, ուստի՝ հետազոտությունների միջոցով ստացված տվյալների հիման վրա ժամանակի ընթացքում միտումների ստույգ վերլուծություն կատարել հնարավոր չի եղել: Ներառելով բռնության վերաբերյալ հարցերն առողջության ընդհանուր հետազոտության մեջ՝ Դանիան կարողացել է վիճակագրություն ունենալ երկրի ողջ ազգաբնակչության շրջանում բռնության միտումների մասին:

Ուսումնասիրությունները

Ստամբուլի կոնվենցիայի 11-րդ հոդվածը մասնակիցներից պահանջում է աջակցել կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ ուսումնասիրություններին՝ անդրադառնալով դրա խորքային պատճառներին և հետևանքներին, տարածվածության և դատապարտման ցուցանիշներին, ինչպես նաև կոնվենցիայի կատարման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների արդյունավետությանը: Այս ուսումնասիրությունները հույժ կարևոր են, որպեսզի քաղաքականությունները մշակվեն փաստական տվյալների հիման վրա: Այս ուսումնասիրությունները չպետք է սահմանափակվեն բռնության պատճառներն ուսումնասիրելու համար անհրաժեշտ տվյալների հավաքագրմամբ, այլ՝ պետք է նպաստեն այնպիսի տեսությունների մշակմանը, որոնք կօգնեն բացատրել պատճառների կապը բռնի վերջնարդյունքների հետ: Կոնվենցիայում նշվում է, որ անհրաժեշտ է ուսումնասիրել կոնվենցիայի կատարման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների արդյունավետությունը: Դա նշանակում է, որ պետք է իրականացնել իրավական և քաղաքականության զարգացումների մոնիթորինգ

և գնահատում, ինչպես նաև՝ գնահատել դրանց արդյունավետությունը կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության նվազեցման գործում: Այսպիսով, կոնվենցիայով պահանջվում է ունենալ ուսումնասիրությունների համապարփակ և բավարար չափով ֆինանսավորվող համակարգ:
Կանանց նկատմամբ բռնության ուսումնասիրությունները կազմակերպվում են տարբեր ձևերով, մասնավորապես՝ համապարփակ և բավարար չափով ֆինանսավորվող ուսումնասիրությունների ծրագրեր, օրենսդրական զարգացումների ազդեցության հասցեական ուսումնասիրություններ, դատապարտման ցուցանիշների ուսումնասիրություններ և թեմատիկ ուսումնասիրություններ համալսարաններում:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության՝ պետական ֆինանսավորմամբ իրականացվող և համապարփակ ռազմավարության շրջանակում կատարվող ուսումնասիրություններն համեմատաբար մեծաթիվ չեն: Որոշ պետություններ ունեն տեղեկությունների մշակման և փոխանակման աջակցման ռազմավարություններ, որոնք օգնում են նվազեցնել գենդերով պայմանավորված բռնությունը: Այդ հանգամանքներում ուսումնասիրությունները կարող են տեղի ունենալ գլոբալ նպատակի համատեքստում: Օրինակ՝ Եվրամիության կողմից ֆինանսավորվող ծրագրային ուղղությունը, որը սկզբում կոչվում էր «Daphne». ծրագրի շրջանակում աջակցություն է ցուցաբերվում լավագույն փորձի փոխանակմանը՝ օժանդակելով այն ծրագրերին, որոնք պարունակում են պրակտիկային միտված հետազոտական բաղադրիչ, ինչպես նկարագրված է ստորև (European Commission Daphne Toolkit): Հաջորդ օրինակը եվրոպական առանձին պետությունների վերաբերյալ ուսումնասիրությունների ծրագիրն, որը ֆինանսավորվում է Նորվեգիայի կողմից (Norway Grants): Կանանց նկատմամբ բռնության ուսումնասիրությունների ծրագիր կա առաջնահերթ համարվող զարգացող երկրներում (Եվրոպայից դուրս), որը ֆինանսավորվում է ՄԹ Միջազգային զարգացման դեպարտամենտի կողմից (նկարագրված է ստորև): Ավելին, Դանիայում գենդերով պայմանավորված բռնության վերաբերյալ ուսումնասիրությունների անցկացմանը նպաստել է տվյալների շտեմարանների ձևավորումը, որոնք տեղեկություններ են պարունակում այն մասին, թե որքանով են գենդերով պայմանավորված բռնությունից տուժող անձինք օգտվում հանրային ծառայություններից: Պետությունն աջակցել է ռեգիստրների ձևավորմանը և տվյալների օգտագործման մասին օրենքների մշակմանը և ընդունմանը, ինչի շնորհիվ էլ հնարավոր են դառնում նման ուսումնասիրությունները: Դա ուսումնասիրությունների ֆինանսավորման ծրագիր չէ, այլ՝ ֆինանսավորվող գործունեություն, որն աջակցում է ուսումնասիրություններին: Մանրամասները նկարագրված են ստորև:

Ֆինանսավորում է տրամադրվում նաև կոնկրետ օրենսդրական զարգացումների ազդեցությունն ուսումնասիրելու նպատակով: Օրինակ, Ավստրիան և Գերմանիան ֆինանսավորել են պաշտպանության որոշումների մասին օրենքների ազդեցության գնահատման ծավալուն ուսումնասիրություններ, որոնց նպատակն է գնահատել այդ օրենքների ազդեցությունը և դրանցում բարելավումներ կատարելու անհրաժեշտությունը: Նոր օրենսդրական ակտերի ազդեցության գնահատումները 11-րդ հոդվածով պահանջվող ուսումնասիրությունների բազմաթիվ տեսակներից են:

Կոնվենցիայով պահանջվում է ուսումնասիրել դատապարտման ցուցանիշները, որը կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարում քրեական արդարադատության համակարգի արդյունավետության կարևոր ցուցիչ է: Դատապարտման ցուցանիշներով չափվում է, թե որքանով են քրեական արդարադատության համակարգում արձանագրվող հանցագործությունների մասով մեղադրական դատավճիռներ կայացվում հանցագործների նկատմամբ: Դատապարտման ցուցանիշը չափելու անհրաժեշտությունը Կոնվենցիայում նշվում է 11.1.բ հոդվածում: Դատապարտման ցուցանիշը կարելի է հաշվարկել կամ քրեական արդարադատության համակարգի տարբեր մասերի համար (օրինակ՝ մեղադրական եզրակացությունից մինչև մեղադրական դատավճիռ), կամ ողջ համակարգի վերաբերյալ (օրինակ՝ համեմատելով արձանագրված հանցագործությունների թիվը դատարաններում դատապարտված հանցագործների թվի հետ): Թեպետ քրեական արդարադատության համակարգի առանձին բաղադրիչներին վերաբերող ցուցանիշները կարևոր նշանակություն ունեն այդ բաղադրիչների համար, կարևոր է իմանալ նաև քրեական արդարադատության ողջ համակարգում կայացվող մեղադրական դատավճիռների ցուցանիշը: Վերջինս ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ունենալ տվյալներ, որոնցում սկզբից մինչև վերջ կօգտագործվեն միևնույն սահմանումները և չափման միևնույն միավորները: Եթե կան տարբեր սահմանումներ և չափման տարբեր միավորներ, ապա դժվար կամ անհնար է դառնում պարզել, թե քանի քրեական արդարադատության համակարգ մուտք գործած դեպքերից քանիսն է ավարտվել մեղադրական դատավճռով: Ուստի, խիստ կարևոր է, որպեսզի ոստիկանությունը, դատախազությունը, դատարանները, բանտերը և պրոբացիայի ծառայություններն օգտագործեն միևնույն սահմանումները և չափման միևնույն միավորները: Բազմաթիվ պետություններ ներկայումս տարբեր միավորներ են օգտագործում քրեական արդարադատության համակարգի տարբեր փուլերում. հանցագործություններ (դեպքեր, միջադեպեր)՝ ոստիկանության կողմից, իրավախախտներ (հանցագործներ)՝ դատական համակարգի և բանտերի կողմից: (Դրանք հաճախ տարբերվում են մասնագիտացած ծառայությունների տվյալներից, որոնց կողմից կիրառվում է «տուժողներ» դասակարգիչը:) Այն պետությունները, որոնք քրեական արդարադատության համակարգի տարբեր փուլերում ներկայումս օգտագործում են չափման տարբեր միավորներ (տուժողներ, հանցագործություններ, իրավախախտներ), պետք է դրանք համապատասխանեցնեն, որպեսզի կարողանան կոնվենցիայի համաձայն արդյունավետորեն չափել դատապարտման ցուցանիշները: Նրանք կարող են դա անել՝ կամ ընտրելով չափման մեկ նախընտրելի միավոր քրեական արդարադատության ողջ համակարգի և ողջ դատական համակարգի համար, կամ պահանջելով, որպեսզի տվյալները քրեական արդարադատության ողջ համակարգում հավաքագրվեն չափման բոլոր երեք միավորների օգտագործմամբ: Համագործակցության հավանականությունն ավելի մեծ է, եթե սահմանվում է չափման բոլոր երեք միավորների օգտագործման պահանջ՝ դրանցից միայն մեկի օգտագործումը պարտադրելու փոխարեն: Օրինակ, տուժողների թվի, հանցագործությունների թվի և իրավախախտների թվի հաշվարկումը բոլոր փուլերում ավելի լավ է, քան տուժողների թիվը մեկ փուլում հաշվարկելը (օրինակ՝ ուսումնասիրությունների միջոցով), իսկ հանցագործությունների թիվը՝ մեկ այլ փուլում (օրինակ՝ ոստիկանության կողմից) հաշվարկելը և իրավախախտների թիվը՝ այլ փուլում (օրինակ՝ դատարաններում) հաշվարկելը:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության թեմային նվիրված հատուկ ուսումնասիրություններ անցկացվում են նաև համալսարանների կողմից: Թեպետ կանանց նկատմամբ բռնության խնդիրներն հետազոտողների լուրջ հանրույթ է ձևավորվել համալսարաններում, ոլորտով զբաղվողներն ավելի հաճախ դա անում են առանձին նախաձեռնությունների շրջանակում՝ հիմնվելով կոնկրետ հետազոտողների և բուհական կենտրոնների նվիրումը և խանդավառության վրա,[7] այլ ոչ՝ պետական ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի շրջանակում: Այնուամենայնիվ, սա հետազոտական աշխույժ բնագավառ է, որում իրականացվող որոշ ուսումնասիրություններ անդրադառնում են նաև գենդերով պայմանավորված բռնության մասշտաբներին, և որը կարող է զգալիորեն կատարելագործվել, եթե մշակվեն և ներդրվեն ուսումնասիրությունների համապարփակ և համակարգված ծրագրեր:

Զարգացող երկրներում ՄԹ ուսումնասիրությունների ծրագիրը

ՄԹ Միջազգային զարգացման դեպարտամենտը (DFID) 25 միլիոն ֆունտ ստերլինգ է ներդրել հնգամյա ուսումնասիրության ծրագրի մեջ, որի նպատակն է պարզել, թե ինչպես է հնարավոր կանխել կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունն առաջնահերթ համարվոզ զարգացող երկրներում (DFID 2015): Ծրագրի նպատակն է տեղեկություններ ձեռք բերել այն մասին, թե ինչպես է հնարավոր արդյունավետորեն կանխել կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը, այդ թվում՝ կանխարգելման առաջնային ռազմավարություններով, բռնության նկատմամբ կանանց և աղջիկների դիմադրողականության բարձրացման ծրագրերի միջոցով, ինչպես նաև կանանց և աղջիկների նկատմամբ բռնության կանխարգելման կոնկրետ մեխանիզմներով: Նշված ծրագիրը երկու մասից է կազմված. ֆինանսավորում կա 10-ից 14 ազգային կամ միջազգային կազմակերպությունների կողմից բռնության կանխարգելման նորարարական մոտեցումներն ուսումնասիրելու կամ տուժողների/վերապրողների կարիքները հոգալու համար, և ֆինանսավորում կա առկա խոստումնալից ծրագրերի արդյունքները և ազդեցությունը վերլուծելու և գնահատելու համար: Ուսումնասիրության համար ընտրվել են DFID-ի կողմից առաջնահերթ ճանաչված պետությունները, որոնք զարգացող 28 ամենաաղքատ պետություններն են կամ առավել անկայուն վիճակում գտնվող պետությունները: Ծրագիրը ղեկավարվում է Հարավային Աֆրիկայի բժշկական ուսումնասիրությունների խորհրդի կողմից կառավարվող կոնսորցիումը՝ Լոնդոնի Հիգիենայի և արևադարձային բժշկության և «Social Development Direct» կազմակերպության հետ համատեղ:

Սա խոստումնալից գործունեություն է, քանի որ ծրագրով նախատեսվում են պատշաճ կերպով կազմակերպվող և բավարար չափով ֆինանսավորվող մեծամասշտաբ ուսումնասիրություններ, թեպետ տվյալ պարագայում այն չի ներառում եվրոպական պետությունները:

7. Օրինակ, CWASU (Երեխաների և կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի բաժինը) Լոնդոնի Մետրոպոլիտան համալսարանում:

Եվրամիության «Daphne» ծրագիրը

«Daphne» ծրագիրը ֆինանսավորվել է Եվրամիության կողմից՝ նպատակ ունենալով աջակցել գենդերով պայմանավորված բռնության կանխարգելման լավագույն փորձի փոխանակմանը: Թեպետ ծրագիրը միտված է եղել պրակտիկայի վրա հիմնված գիտելիքի կուտակմանը՝ փորձի փոխանակումը կազմակերպելով հիմնականում հասարակական կազմակերպությունների միջև, դա ներառել է նաև համապատասխան կարողությունների զարգացումը՝ հանգեցնելով ուսումնասիրությունների այնպիսի ֆինանսավորմանը, որը տրամադրվում է պրակտիկայի վրա հիմնված զարգացմանն աջակցելու նպատակով: Ֆինանսավորված 412 ծրագրերի շրջանակում կուտակված գիտելիքը և կատարված ուսումնասիրությունները դրական գնահատականի են արժանացել թե՛ հետազոտողների, թե՛ քաղաքականություն մշակողների շրջանում: «Daphne» ծրագիրը երեք հիմնական փուլեր ՝ ունեցել՝ սկսած 1997 թվականից (European Commission Daphne Toolkit), մինչդեռ ավարտական ծրագիրը՝ «Daphne III»-ը, իրականացվել է 2007-ից 2013 թվականներին (European Commission Daphne III): «Daphne» ծրագրի սկզբունքները ներկայումս կիրառվում են Իրավունքների, հավասարության և քաղաքացիության 2014-2020 թթ. նոր ծրագրի (Programme on Rights, Equality and Citizenship, 2014-2020) շրջանակում (European Commission 2015a), որը ներառում է «Վերլուծական աշխատանքներին» (ուսումնասիրություններ, տվյալների հավաքագրում, ընդհանուր մեթոդաբանությունների և ցուցանիշների մշակում, հետազոտություններ, ուղեցույցների հրապարակում) նվիրված ուղղություն:

Սա կարող է համարվել խոստումնալից գործելակերպ, քանի որ ծրագրի շնորհիվ կարևոր ուսումնասիրություններ են կատարել՝ պրակտիկային միտված անդրազգային ֆինանսավորման նորարարական ծրագրի արդյունք:

Ուսումնասիրությունների աջակցությունը Դանիայի ռեգիստրների շրջանակում

Դանիայում ստեղծվել է հետազոտական և վարչական վիճակագրություն, որն անհրաժեշտ է կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության խորացված հետազոտությունների ծրագրի համար (ինչպես քննարկվեց վերևում՝ վարչական վիճակագրությանը նվիրված բաժնում) (Thygesen and Kjaer Ersb0ll 2011): Դանիան կարողանում է պարզել բռնությունից տուժած անձանց բնակչության հետազոտության միջոցով, որից հետո այդ տեղեկությունը կապակցվում է բռնությունից տուժած անձանց մասին վարչական վիճակագրության մեջ առկա այն տվյալների հետ, որոնք վերաբերում են հանցագործությունների հետ կապված ծառայությունների, հիվանդանոցների և ապաստարանների օգտագործմանը, ինչպես նաև մահվան պատճառներին: Տվյալները փոխկապակցվում են՝ բոլոր այդ համակարգերում օգտագործելով անձնական նույնականացման միևնույն համարները: Այդկերպ հնարավոր է բռնության փորձառության վերաբերյալ առողջության հետազոտությունից (NHIS) ստացված տվյալները փոխկապակցել վարչական աղբյուրներից ստացված տվյալների հետ, քանի որ թե՛ հետազոտության հարցվողները, թե՛ պետական ծառայություններից օգտվողները նույնականացվում են անձնական համարով: Միևնույն անձի վերաբերյալ հետազոտության և վարչական վիճակագրության

տվյալները կապակցելով՝ հնարավոր է հետազոտել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության հետևանքներն առողջության և քրեական արդարադատության տեսանկյուններից:
2004 թվականից ի վեր կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ տվյալների համապարփակ ազգային շտեմարանում կուտակվել են տվյալներ տարբեր աղբյուրներից, ներառյալ՝ վարչական վիճակագրությունից, որոնք հասանելի են դարձել ազգային ռեգիստրներում և Առողջության հարցազրույցների 2005 և 2010 թվականների ազգային հետազոտությունների (Helweg-Larsen 2010) վիճակագրությունից: Այդկերպ հնարավոր է առողջության, հանցավորության և սոցիալական ազգային ռեգիստրների տվյալներն համադրել առողջության ազգային հետազոտությունների միջոցով ստացված տեղեկությունների հետ անհատական մակարդակում՝ կիրառելով Դանիայում մշտապես բնակվող բոլոր անձանց տրվող՝ անձնական նույնականացման չկրկնվող համարը: Դանիայի Անձնական տվյալների մշակման մասին օրենքը կարգավորում է տվյալների ստացումը և օգտագործումը վիճակագրական և գիտական նպատակներով, ինչպես նաև բացարձակ անանունություն է երաշխավորում տվյալների սուբյեկտներին:

Տուժողների մասին վիճակագրություն (POL-SAS) կարող է համադրվել այլ ռեգիստրների հետ՝ գնահատելու համար տուժողի և իրավախախտի սոցիալական բնութագիրը: Հնարավոր է հաշվարկել, թե հետազոտության շրջանակում ներկայացված՝ բռնության դեպքերի ընդհանուր թվի որ տոկոսի արդյունքում է տեղի ունեցել կոնտակտ հիվանդանոցի հետ և/կամ հաղորդում ներկայացվել ոստիկանությանը: Հանցավորության վիճակագրությունը՝ Հիվանդների ազգային ռեգիստրում առկա տվյալների համակցությամբ, հնարավոր են դարձնում պարզել, թե ինչ չափով են բռնությունից տուժող անձինք որոշակի ժամանակահատվածում կոնտակտ ունեցել ոստիկանության կամ հիվանդանոցի հետ, և այդ կերպ հաշվարկել բռնությունից տուժող անձանց տարեկան թիվը բնակչության այն խմբում, որը դիմում է առողջապահական և/կամ դատահիրավական համակարգերին: Հետազոտական մի շարք հրապարակումներ օգտվել են հետազոտությունների վերը նշված ենթակառուցվածքից (Kruse et al. 2010):

Կանանց նկատմամբ բռնության եվ ընտանեկան բռնության վերաբերյալ տվյալների հավաքագրման և հետազոտությունների համակարգումը

Տվյալների հավաքագրումը և հետազոտությունները կատարելագործելու համար անհրաժեշտ է համակարգում իրականացնել, որպեսզի լիարժեք օգտագործվի քաղաքականության մշակմանն աջակցելու ներուժը: Կոնվենցիայում նշվում է ազգային համակարգող մարմին ունենալու անհրաժեշտությունը (հոդված 10) և նշվում է, որ 11-րդ հոդվածի համաձայն հավաքագրվող տեղեկությունները պետք է տրամադրվեն ԳՐԵՎԻՈ-ին (հոդված 66)՝ վերջինիս աշխատանքին աջակցելու համար: Ներկայումս մշակվում են այլ կարևոր մեխանիզմներ, որոնք նույնպես կաջակցեն համակարգմանը, այդ թվում՝ սահմանումներ և դասակարգման միջազգայնորեն համադրելի համակարգեր և ցուցանիշներ մշակելու ուղղությամբ ՄԱԿ-ի և Եվրամիության գործակալությունների աշխատանքը:

Համակարգող պաշտոնական մարմինները

Ստամբուլի կոնվենցիայի 10-րդ հոդվածով պահանջվում են 11-րդ հոդվածի համաձայն հավաքագրվող տեղեկությունները համակարգող ազգային մարմիններ: Մասնավորապես, կողմերը պետք է «մեկ կամ մեկից ավելի մարմինների լիազորեն սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի կանխարգելման և դրանց դեմ պայքարի համար մշակված քաղաքականությունների և միջոցների համակարգումը, իրականացումը, դիտարկումն ու գնահատումը կատարելու համար»: Նրանք պետք է նաև «համակարգեն 11-րդ հոդվածում նշված տվյալների հավաքումը, ուսումնասիրությունը և տարածումը»: Ավելին, այդ պաշտոնական մարմինները «պետք է հնարավորություն ունենան՝ անմիջապես հաղորդակցվելու սույն Կոնվենցիային մասնակից այլ պետություններում իրենց գործընկեր մարմինների հետ և խթանելու նրանց հետ հարաբերությունները»:

Համակարգող այդ մարմինները պետք է լինեն պաշտոնական կառավարական մարմիններ՝ կամ գործող, կամ նորաստեղծ մարմիններին այդ լիազորությունները վերապահելու ձևով: Գոյություն ունեցող մարմինների օրինակներ կարող են

լինել կանանց նկատմամբ բռնության դիտակենտրոնները, միջնախարարական համակարգող կառույցները կամ փորձագիտական մարմինները (օրինակ՝ հետազոտական որևէ ինստիտուտ կամ ազգային վիճակագրական ինստիտուտ), որն ունի նաև պետական քաղաքականության մշակման և իրագործման լիազորություններ: Դա վկայում է այն մասին, որ հնարավոր են տարաբնույթ մոտեցումներ: Կոնվենցիան ուղղակիորեն թույլ է տալիս այդ մարմիններին անմիջականորեն հաղորդակցվել մասնակից այլ պետություններում գործող համանման մարմինների հետ: Նրանք կարող են աշխատանքային հարաբերություններ ձևավորել մասնակից այլ պետություններում գործող համանման մարմինների հետ՝ ակնկալելով, որ դա կնպաստի ոչ միայն փոխշահավետ համագործակցությանը, այլ նաև՝ պրակտիկայի ներդաշնակեցմանը (Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույց, պարբ. 73):

Եվրամիության մակարդակում գոյություն ունեն երեք մարմիններ, որոնք կարող են համագործակցություն ձևավորել կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ տվյալների հավաքագրման, վերլուծության և տարածման ոլորտում: Դրանք են Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտը (EIGE), Եվրամիության հիմնարար իրավունքների գործակալությունը (FRA) և Եվրոստատը: Եվրամիությունում որոշ առաջարկներ են ներկայացվել, մասնավորապես՝ Կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների խորհրդատվական հանձնաժողովի (European Commission Advisory Committee 2014) կողմից՝ այդ կարողություններն այնպես զարգացնելու մասին, որպեսզի դա համահունչ լինի Ստամբուլի կոնվենցիայի պահանջներին, մասնավորապես՝ ընդունելով կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ Եվրամիության ռազմավարություն, ստեղծելով Կանանց նկատմամբ բռնության հարցերով Եվրամիության համակարգողի ինստիտուտը, որին կաջակցի դրանում ներկայացված ազգային իրավասու մարմինների ցանցը, մեկտեղելով անդամ պետությունների կողմից առաջընթացի մոնիթորինգի՝ իրավաբանորեն պարտադիր փաստաթղթերի պահանջների կատարման վերաբերյալ առկա տեղեկությունները, հավաքագրելով ստանդարտացված և ներդաշնակեցված վարչական և հետազոտական տվյալներ, մշակելով ստանդարտներ, ցուցանիշներ, մեթոդներ և ուղենիշներ, ֆինանսավորելով կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ հետազոտությունները և մշակելով կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ տվյալների հավաքագրումը բարելավելու ճանապարհային քարտեզ: Այնուամենայնիվ, դա վերաբերում է միայն կոնվենցիային միացած այն պետություններին, որոնք Եվրամիության անդամ պետություններ են:

Համակարգող պաշտոնական մեխանիզմների կողմից աջակցության տրամադրման նպատակով առաջարկվող հնարավոր մեխանիզմները ներառում են.

- Վարչական և հետազոտական տվյալների հավաքագրման և վերլուծության նպատակով Ստամբուլի կոնվենցիայով նախատեսված սահմանումների կիրառության վերաբերյալ ուղենիշներ,
- Վարչական և հետազոտական տվյալների հավաքագրման և վերլուծության համար կիրառվելիք մեթոդաբանության վերաբերյալ

ուղենիշներ,

- Աջակցություն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ հետազոտությունների համապարփակ ծրագրերի մշակմանը, և այդ ծրագրերի ֆինանսավորում,
- Աջակցություն շահակիցների համախմբմանը և համակարգմանը, ներառյալ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և համալսարանները, փորձագիտական ժամանակավոր խմբերը և ցանցերը, ինչպես նաև գոյություն ունեցող կառավարական մարմինները, նպատակ հետապնդելով բարելավել տվյալների հավաքագրման և վերլուծության որակը և ներդաշնակեցման մակարդակը,
- Խթանել բանավեճը բնակչության տարբեր խմբերի միջև՝ իրազեկությունը բարձրացնելու, ժողովրդավարական մասնակցություն ապահովելու, ինչպես նաև եզրակացությունները և բացահայտումները թիրախային և ընդհանուր լսարանների շրջանում տարածելու նպատակով:

Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող մոնիթորինգը

Ստամբուլի կոնվենցիայի կատարման մոնիթորինգը

Կոնվենցիայի 11.3 հոդվածով պահանջվում է Կոնվենցիայի 66-րդ հոդվածում նշված Անկախ փորձագիտական խմբին Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի միջոցառումների հարցերով փորձագիտական խումբ, ԳՐԵՎԻՈ, GREVIO) տրամադրել 11-րդ հոդվածի համաձայն հավաքված տեղեկատվությունը: ԳՐԵՎԻՈ-ն պետք է գնահատման յուրաքանչյուր շրջափուլի հարցաշարն հաստատելիս հավուր պատշաճի հաշվի առնի կոնվենցիայի մասնակից պետությունների հավաքագրած առկա տվյալները և հետազոտությունները: ԳՐԵՎԻՈ-ն պետք է 2015 թվականի տարեվերջի դրությամբ հաստատած լինի իր աշխատանքային մեթոդները:

Քաղաքականության իրագործման առաջընթացի մոնիթորինգը

Եվրոպայի խորհուրդը (2014: 6) կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի քաղաքականության՝ անդամ պետություններում իրագործման առաջընթացի պարբերական մոնիթորինգի շրջանակում որոշակի հիմքեր է ձևավորել այդ առաջընթացի հենակետային գնահատման ցուցանիշների ստեղծման համար:

Կանանց բռնությունից պաշտպանության վերաբերյալ Նախարարների կոմիտեի թիվ Rec(2002)5 հանձնարարականը ներառում է կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերի (բռնաբարություն և սեռական բռնություն, բռնություն ընտանիքի կամ կենցաղային միավորի ներսում, սեռական հետապնդում, կնոջ սեռական

օրգանների խեղում, բռնություն հակամարտային և հետհակամարտային իրավիճակներում, բռնություն ինստիտուցիոնալ միջավայրում, վերարտադրման հարցերում ընտրության ազատությունը չհարգելը (հարկադիր աբորտը կամ հարկադիր ամլացումը), հանուն պատվի սպանելը և հարկադիր և վաղ ամուսնությունները) դեմ պայքարի միջոցառումների տեսականի:

2005 թվականից սկսած Եվրոպայի խորհուրդը մոնիթորինգի է ենթարկել, թե անդամ պետություններն ինչ չափով են կյանքի կոչել նշված հանձնարարականը: Ստանդարտացված հարցաշարին Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների տված կամավոր պատասխանների հիման վրա գնահատվել է կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի առաջընթացը օրենսդրական, քաղաքականության և ծառայությունների մատուցման ոլորտներում: Մոնիթորինգի չորրորդ շրջափուլի արդյունքները, որոնք պարունակող վերլուծական զեկույցն հրապարակվել է 2014 թվականի մարտին, առաջընթացի դիտարկման թվային տեղեկություններ է պարունակում մի քանի ոլորտների, ներառյալ՝ կանանց նկատմամբ բռնության մասին տվյալների հավաքագրման և հետազոտությունների վերաբերյալ: Հրապարակումը տեղեկատվության յուրահատուկ աղբյուր է, քանի որ այն պարունակում է ժամանակի ընթացքում տեղի ունեցած զարգացումների վերլուծական համեմատությունը և ունի աշխարագրական լայն ընդգրկում:

Վերջին մոնիթորինգը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ ավելացել է թե՛ վարչական վիճակագրության հավաքագրումը, թե՛ տարածվածության հետազոտությունների անցկացումն ընդհանուր ազգաբնակչության շրջանում, թեպետ համադրելիության մակարդակը շարունակում է ցածր մնալ: Հանցագործությունների մասին հաղորդումների ոստիկանական տվյալների (ըստ սեռի և հարաբերությունների, կամ՝ ըստ ընտանեկան բռնության մասին ստացված հաղորդումների) հավաքագրման տարբեր մեթոդներ կան: Թեպետ որոշ անդամ պետություններ կարող են ընտանեկան բռնության տվյալները և վիճակագրությունը ստանալ հանցագործությունների ընդհանուր վիճակագրությունից, կան նաև պետություններ, որոնք ընտանեկան բռնության վերաբերյալ հաշվետվությունների առանձին համակարգեր են ստեղծել (օրինակ՝ Նիդեռլանդները, Լեհաստանը կամ Լյուքսեմբուրգը): Բացի դրանից, որոշ հետազոտություններ անդրադարձել են կանանց նկատմամբ բռնության բազմաթիվ տարբեր ձևերի, մինչդեռ եղել են նաև հետազոտություններ, որոնք անդրադարձել են միայն ընտանեկան բռնության խնդիրներին:

Դրանից զատ, Եվրոպայի խորհուրդը 2008 թվականին հրապարակել է ուսումնասիրություն Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում ընտանեկան բռնության վերաբերյալ վարչական տվյալների հավաքագրման վերաբերյալ: Ուսումնասիրությունը նպատակ է ունեցել գնահատել կանանց նկատմամբ ընտանեկան բռնության վերաբերյալ անդամ պետություններում հավաքագրվող վարչական տվյալների տեսակները, մշակել օրինակելի մոտեցում, որն առաջարկներ կպարունակի վարչական տվյալների հավաքման նոր մոտեցումների վերաբերյալ, ուղենիշներ ներկայացնել այն մասին, թե պետական իշխանության որ մակարդակները և պետական կամ մասնավոր որ կառույցները պետք է տվյալների որ տեսակներն հավաքագրեն, ինչպես նաև՝ թե ինչպես է պետք ստեղծել վարչական տվյալների համակարգ այն կառույցներում, որոնք դեռևս չեն հավաքագրում տվյալներ: Ուսումնասիրությունն առաջարկներ է պարունակում

այն մասին, թե ինչպես կարելի է վարչական տվյալների համակարգ ստեղծել այն կառույցներում, որոնք դեռևս չեն հավաքագրում առաջարկվող տվյալները (էջեր 21-22), ինչպես նաև՝ վարչական տվյալների հավաքագրման օրինակելի մոտեցումը (էջեր 23-24):

Միջազգային հենանիշները

Հենանիշները նպաստում են համակարգմանը՝ ծառայելով որպես ընդհանուր ելակետ: Մարդու իրավունքների միջազգային և տարածաշրջանային մարմինները մի քանի առաջարկներ են ներկայացրել կանանց նկատմամբ բռնության սահմանման վերաբերյալ և կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի առաջընթացի հենանիշային գնահատման վերաբերյալ, այդ թվում՝ ՄԱԿ-ը (մասնավորապես՝ ՄԱԿ-ի Վիճակագրության հանձնաժողովը, Կանանց դերի բարձրացման հարցերով ՄԱԿ-ի բաժինը (որն այժմ մտել է ՄԱԿ-ի Կանանց կազմակերպության կազմի մեջ, Թմրադեղերի և հանցավորության դեմ պայքարի հարցերով ՄԱԿ-ի գրասենյակը և Առողջության համաշխարհային կազմակերպությունը), Եվրոպայի խորհուրդը և Եվրամիությունը:
ՄԱԿ-ը կարևոր դեր է ունեցել կանանց նկատմամբ բռնության հասկացության սահմանման գործում, որի վրա հիմնվել է ՄԱԿ-ի գործակալությունների և միջազգային այլ մարմինների աշխատանքը:
Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին ՄԱԿ-ի հռչակագիրը (1993) սահմանում է կանանց նկատմամբ բռնությունը որպես գենդերով պայմանավորված բռնության ցանկացած գործողություն, որի արդյունքը կամ հավանական արդյունքն է ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնասը կամ տառապանքը կանանց համար, ներառյալ՝ նման գործողության սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայականորեն զրկելը՝ թե՛ հանրային, թե՛ մասնավոր կյանքի ոլորտում:

Ստամբուլի կոնվենցիան 2011 թվականին հենվել է ՄԱԿ-ի 1993 թվականի սահմանման վրա: ՄԱԿ-ը և ՄԱԿ-ի գործակալություններն իրենց ուշադրությունն հիմնականում կենտրոնացնում են կանանց նկատմամբ բռնության խնդիրների ուղղությամբ, մինչդեռ Եվրոպայի խորհուրդն առանձին հղում է կատարում նաև ընտանեկան բռնությանը: Ստամբուլի կոնվենցիան մասնակիցներից պահանջում է անդրադառնալ կանանց նկատմամբ բռնության ձևերին, մինչդեռ ընտանեկան բռնությունից տուժող բոլոր անձանց (կանանցից և աղջիկներից զատ) ընդգրկելը պարտադիր չէ (թեպետ խրախուսվում է): Ազգային և միջազգային հենանիշները պետք է ներառեն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության բոլոր ձևերը, որոնց անդրադառնում է Ստամբուլի կոնվենցիան:

ՄԱԿ-ի ներսում (Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները նաև ՄԱԿ-ի անդամ են) տվյալների հավաքագրման, վերլուծության և տարածման ոլորտում համագործակցության խորացման գործընթացը ներառել է տարաբնույթ միջոցառումներ և գործող անձանց, այդ թվում՝ տարբեր գիտնականներից, ՀԿ-ներից և կառավարությունների ներկայացուցիչներից կազմված փորձագիտական խմբերի ստեղծումը, տվյալների հավաքագրման

և վերլուծության ներդաշնակեցված մեթոդների կիրառությունը խթանող ուղեցույցների և ձեռնարկների ստեղծումը, համաձայնեցված ստանդարտների ստեղծումը և տարածումը ՄԱԿ-ի Վիճակագրության հանձնաժողովի կողմից, ինչպես նաև ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի, ՄԱԿ-ի Կանանց կազմակերպության և տարածաշրջանային մարմինների (օրինակ՝ ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի) ներգրավումը: Թեպետ բովանդակությունը ոչ ամբողջությամբ է համապատասխանում Ստամբուլի կոնվենցիայի պահանջներին, այնուհանդերձ, կիրառվող մեխանիզմները ներառում են համագործակցության հնարավոր տեսակների մի շարք կարևոր օրինակներ:

Եվրամիության նախագահությունները կանանց նկատմամբ բռնության որոշ ցուցանիշներ են առաջարկել Գործողությունների պեկինյան ծրագրին Եվրամիության հանձնառության շրջանակում՝ ներառելով աջակցման ծառայությունների տրամադրումն ընտանեկան բռնությունից, աշխատավայրում սեռական հետապնդումից և կանանց նկատմամբ բռնությունից տուժած անձանց (European Commission 2015b): Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտը տրամադրել է գենդերով պայմանավորված բռնության վերաբերյալ Եվրամիությունում առկա՝ վարչական տվյալների աղբյուրների և վիճակագրական պրոդուկտների շտեմարանը (EIGE 2014b): Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտը կանանց նկատմամբ բռնությունը 2015 թվականին առաջին անգամ ներառել է իր կողմից հրապարակվող՝ Գենդերային հավասարության համաթվի մեջ:[8] ՄԱԿ-ի Վիճակագրության հանձնաժողովի նախագահի բարեկամների ինստիտուտը կանանց նկատմամբ բռնության չափման 9 հիմնական ցուցանիշներ է առաջարկել (UN Statistical Commission 2010: 19): Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի օրենսդրության և հարակից քաղաքականությունների օրինակելի շրջանակ է հրապարակել Կանանց դերի բարձրացման հարցերով ՄԱԿ-ի բաժինը (UNDAW 2010): Այդ ցանկը պարունակում է ցանկալի օրենսդրական ակտերի և հարակից քաղաքականությունների (ներառյալ՝ տուժողների պաշտպանության մասով) թվարկումը, որոնք կարող են օգտագործվել իրավական ոլորտում և քաղաքականության ոլորտում առաջընթացի ցուցանիշներ մշակելու համար, թեպետ դա ինքնին ցուցանիշների ցանկ չէ:

Կայուն զարգացման 2030-ի օրակարգի շրջանակում (որն համաձայնեցվել է ՄԱԿ-ի անդամ պետությունների միջև) Կայուն զարգացման 17 նպատակներ (ԿԶՆ-ներ) են ընդունվել, որոնցից մեկն է «Հասնել գենդերային հավասարության և զորացնել բոլոր կանանց և աղջիկներին» (ԿԶՆ 5): Այս նպատակի ներքո համաձայնեցված թիրախներից է «Վերացնել բոլոր կանանց և աղջիկների հանդեպ գործադրվող բռնության բոլոր ձևերը պետական և մասնավոր ոլորտներում» (5.2): 2015 թվականի սեպտեմբերի վերջին ԿԶՆ-ների ընդունումից հետո 2016 թվականին դրանց իրագործման առաջընթացի մոնիթորինգի մի շարք ցուցանիշներ են մշակվել ՄԱԿ-ի Վիճակագրության բաժնի կողմից: Այդ ցուցանիշներն հավանաբար կներառեն կանանց նկատմամբ բռնության վերացման ուղղությամբ առաջընթացի չափման համաձայնեցված ցուցանիշները, որոնք կարևոր համաշխարհային հենանիշի դեր կկատարեն:[9]

8. European Institute for Gender Equality (2015) Gender Equality Index http://eige.europa. eu/sites/default/files/documents/mh0415169enn.pdf.
9. ՄԱԿ-ի կայուն զարգացման գործընթացի վերաբերյալ թարմ տեղեկություններ կարելի է

Վիճակագրական նպատակների համար հանցագործությունների միջազգային դասակարգումը (International Classification of Crimes for Statistical Purposes, ICCS) հանցագործությունների նոր դասակարգում է, որը մշակվել է Թմրադեղերի և հանցավորության դեմ պայքարի հարցերով ՄԱԿ-ի գրասենյակի առաջնորդմամբ և աջակցություն է ստացել ՄԱԿ-ի Վիճակագրության բաժնի կողմից (UNODC 2015): Այն նպատակ ունի հնարավոր դարձնել հանցագործությունների համեմատական վերլուծությունը պետությունների միջև՝ մշակելով հանցագործությունների դասակարգման միասնական հենանիշեր: Հայեցակարգը վերաբերում է կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության մասին տվյալների հավաքագրմանը, որը ներառում է այն հանցագործությունները, որոնք կարող են դասակարգվել կամ որպես «անձին վնաս պատճառող կամ վնաս պատճառելու դիտավորություն ունեցող հանցագործություններ», կամ որպես «մարմնական վնասվածք պատճառող սեռական բնույթի գործողություններ»: ICCS-ն խուսափում է հանցագործությունների իրավական սահմանման տարբերակումների բարդություններից՝ ընդունելով հայեցակարգ, որի հիմքում ոչ թե իրավական դասակարգումն է, այլ՝ վարքագիծը: Նշում է, որ դասակարգման առաջնահերթությունները բխում են պետական քաղաքականության գերակայություններից: ICCS-ը նպատակ ունի հնարավոր դարձնել հանցագործությունների համեմատական վերլուծությունը պետությունների միջև՝ մշակելով հանցագործությունների դասակարգման միասնական համակարգ: ICCS-ը պետք է կիրառելի լինի հանցագործությունների վերաբերյալ տվյալների բոլոր ձևերի նկատմամբ, որոնք հավաքագրվում են քրեական արդարադատության գործընթացի տարբեր փուլերում (ոստիկանություն, քրեական հետապնդում, մեղադրական դատավճիռ, բանտարկում), ինչպես նաև՝ հանցագործություններից տուժողների հետազոտություններ (էջ 7): Դասակարգումն ունի 4 մակարդակ. առաջին մակարդակում կան 11 հիմնական բաժանումներ, որոնցից երեքն առնչվում են կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության խնդիրներին. «1. Մահվան հանգեցնող կամ մահ պատճառելու դիտավորություն ունեցող գործողություններ, 2. Անձին վնաս պատճառող կամ վնաս պատճառելու դիտավորություն ունեցող գործողություններ, 3. Մարմնական վնասվածք պատճառող սեռական բնույթի գործողություններ, որոնց հաջորդում են դասակարգման հաջորդ երեք մակարդակները» (էջ 13): Ուստի, դա կարող է համարվել խոստումնալից քայլ չափման միասնական համակարգ ձևավորելու ուղղությամբ, որը կներառի կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության հետ առնչվող դասակարգումներ: Այնուհանդերձ, ICCS-ի 1.0 տարբերակն համարժեքորեն չի անդրադառնում կանանց նկատմամբ բռնությանը, քանի որ չի ներառում տուժողի սեռը կամ ընտանեկան բռնությունը, քանի որ չի ներառում տուժողի և իրավախախտի ունեցած հարաբերությունները (դրանք ներառվում են կամավոր սկզբունքով): ICCS-ի 1.0 տարբերակը սահմանափակ է, քանի որ չի ներառում կանանց նկատմամբ բռնության կամ ընտանեկան բռնության դասակարգումն ըստ կոդերի համարների կիրառման չորս հիմնական մակարդակների: Թվային հիմնական դասակարգումը չի ներառում ոչ տուժողի սեռը, ոչ տուժողի և իրավախախտի ունեցած հարաբերությունները: դրանք ոչ թե ամբողջովին են բացակայում ICCS-ից, այլ՝ ներառվում են կամավոր սկզբունքով՝ որպես ցուցիչներ, որոնց վերաբերյալ կարող են ներառվել լրացուցիչ տվյալներ, սակայն ներառված չեն հանցագործությունների հիմնական կոդերի մեջ: Ուստի,

դիտել հետևյալ հղումով. https://sustainabledevelopment.un.org/post2015/transformingourworld

թեպետ այս դասակարգումը կարող է օգտակար լինել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ տվյալներ հավաքագրելու համար, այն կօգնի Ստամբուլի կոնվենցիայի մասնակից պետություններին՝ տվյալների հավաքագրման պահանջները բավարարելու հարցում, եթե հավաքագրվեն վերը նշված լրացուցիչ տվյալները նույնպես: Դա կարող է արվել՝ լրացուցիչ կոդեր ավելացնելով դասակարգմանը, և առկա խմբերի մեջ ներառելով նաև բացվածքն ըստ տուժողի սեռի և տուժողի և իրավախախտի ունեցած հարաբերությունների: Որպես այլընտրանք՝ հնարավոր է տուժողի սեռի և տուժողի և իրավախախտի ունեցած հարաբերությունների վերաբերյալ ցուցիչների ներառումը դարձնել պարտադիր: Այսպիսով, դասակարգման մեջ գենդերային բաղադրիչը ներառելու դեպքում ICCS-ը կարող է դառնալ տվյալների հավաքագրմանն աջակցող գործիք: Թեպետ ICCS-ի 1.0 տարբերակն արդեն հաստատվել է, ապագա տարբերակներում կարող են արվել բարեփոխումներ:

Կանանց նկատմամբ բռնությունը կապված է պետական քաղաքականության բազմաթիվ ոլորտների հետ՝ չսահմանափակվելով միայն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության մասնագիտացած բնագավառով: Կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունն արմատախիլ անելու համար անհրաժեշտ է ներգրավել պետական քաղաքականության բազմաթիվ ոլորտների շահագրգիռ անձանց, այդ թվում նաև՝ քրեական արդարադատության համակարգի և առողջապահական ոլորտի սուբյեկտներին, ինչպես նաև տուժողներին մասնագիտացած ծառայություններ մատուցողներին: Այն ներառում է նաև զբաղվածության ոլորտի սուբյեկտներին, որտեղ կա սեռական հետապնդման խնդիր, ինչպես նաև կրթության ոլորտի սուբյեկտներին, քանի որ կրթության միջոցով պետք է ամրապնդել հավասարությունը և վերացնել գենդերային կարծրատիպերը: Ներառված պետք է լինեն նաև լրատվամիջոցները, որոնք շատ կարևոր դեր ունեն կանանց նկատմամբ բռնության դիրքորոշումները շարունակելու կամ ընդհատելու հարցում: Անհրաժեշտ է ապահովել տարբեր ծառայությունների համագործակցությունը և համակարգումը, որպեսզի տուժողներին պատճառվող վնասները մեղմվեն, և որպեսզի կանխարգելման ջանքերն հաջողությամբ պսակվեն: Քաղաքականության յուրաքանչյուր ոլորտ ներկայումս չափման այլ համակարգ է կիրառում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության երևույթների նկատմամբ: Ժամանակն է ներդնել չափման միասնական համակարգ, որը միաժամանակ կիրառելի կլինի բոլոր ոլորտների նկատմամբ: Գործընթացը կարելի է անվանել «բաղադրիչի ներառում» («mainstreaming»): Դրա հիմքում «գենդերային բաղադրիչի ներառում» («gender mainstreaming») հասկացությունն է, որի մշակման գործում էական դերակատարում է ունեցել Եվրոպայի խորհուրդը: Հասկացությունն ընդլայնվում է՝ կիրառվելով ոչ թե գենդերի, այլև՝ «կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության» երևույթի նկատմամբ, որը պետք է ներդնել և կիրառել քաղաքականության հիմնական ոլորտներում: Ինչպես և գենդերային բաղադրիչի ներառման դեպքում, այս գործընթացը ենթադրում է որոշակի ճշգրտումներ թե՛ փոփոխվող ոլորտում (այս պարագայում՝ «կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության» բաղադրիչը), թե՛ բաղադրիչի տեսանկյունից (բաղադրիչը ներառելով քրեական արդարադատության, առողջապահական համակարգերի և զբաղվածության համակարգերում):

Եզրակացություններ

Վարչական և հետազոտական տվյալներ հավաքագրելու և ուսումնասիրություններ կատարելու նպատակն է ձևավորել գիտելիքի բազա կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարելու և Ստամբուլի կոնվենցիայի կատարմանն աջակցելու նպատակով:

Գիտելիքի բազան ավելի արդյունավետ է, եթե բռնության տարածվածության փոփոխությունների չափման հենանիշները և ամփոփ ցուցանիշները բավականաչափ հետևողական և համահունչ են միմյանց: Բռնության տարածվածության և ծանրության չափման համար միևնույն դասակարգումների կիրառությունը հետազոտություններում և տարբեր վարչական աղբյուրներում կնպաստի հետևողական և համահունչ մոտեցումների ձևավորմանը: Դա կարևոր է թե՛ կոնկրետ երկրի ներսում, թե՛ պետությունների միջև:

Նպատակը պետք է լինի կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության չափման միասնական համահունչ հայեցակարգ ձևավորելը, որը կներառի տվյալների համապատասխան բացվածքը: Կապահովվի ներքին համապատասխանությունը և բռնության մակարդակի փոփոխության և պետական ծառայությունների արդյունավետության գնահատման ճշգրտության մակարդակի բարձրացումը:

Հասկանալի է, որ համապատասխանության հասնելու և չափման գործելակերպը ներդաշնակեցնելու նպատակին հասնելը շատ դժվար է: Չափման առկա տարբեր մոտեցումները ձևավորվել են միմյանցից անջատ, պետական քաղաքականության տարբեր բնագավառներում, և բխում են հայեցակարգային տարբեր մոտեցումներից: Քաղաքականության բնագավառներից մի քանիսը կառուցված են մասնագիտացած ինստիտուտների հիման վրա: Ուստի, խնդիրը ոչ միայն գենդերի բաղադրիչը քաղաքականության կայացած բնագավառներում չափման առկա համակարգերի մեջ ներառելն է, այլ նաև՝ կայացած տարբեր բնագավառների չափման համակարգերը ներդաշնակեցնելը: Օրինակ, պետք է բռնության գենդերացված բնույթը հանցագործությունների վիճակագրության մեջ ներառելուց զատ ապահովել նաև հանցագործությունների վիճակագրության համատեղելիությունն առողջապահական վիճակագրության հետ:

Չափման մոտեցումների ներդաշնակեցման և փոխլրացնողության ապահովման գործընթացը բազմաթիվ փոփոխությունների անհրաժեշտություն կառաջացնի,

որոնց համար ժամանակ կպահանջվի:

Ստամբուլի կոնվենցիայի 11-րդ հոդվածը կոնվենցիայի մասնակիցներից պահանջում է վարչական տվյալներ հավաքագրել, ուսումնասիրություններ կատարել և հետազոտական տվյալներ հավաքագրել: Դա անհրաժեշտ է կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի քաղաքականության զարգացումները գնահատել կարողանալու համար: Տվյալներին առնչվող պահանջների բավարարման տեսանկյունից լուրջ մարտահրավերներ կան: Այնուհանդերձ, կան նաև խոստումնալից որոշ մոտեցումներ, որոնք արդեն իսկ կիրառվում են նշված մարտահրավերները քայլ առ քայլ հաղթահարելու գործընթացներում: Կարևոր է, որպեսզի կոնվենցիայի մասնակից պետություններն աջակցեն վիճակագրական տվյալների և հետազոտական տվյալների հավաքագրմանը և ուսումնասիրություններին, ինչպես նաև չափման միասնական համակարգերի ձևավորման աշխատանքներին, որոնցում հնարավոր կլինի լավագույնս օգտագործել բոլոր այդ տվյալները:

Ստուգաթերթ

Ստամբուլի կոնվենցիայի 11-րդ հոդվածը կոնվենցիայի մասնակիցներից պահանջում է վարչական տվյալներ հավաքագրել, ուսումնասիրություններ կատարել և հետազոտական տվյալներ հավաքագրել: Հետևյալ ստուգաթերթը կարող է օգտակար լինել այդ պահանջները բավարարելու գործում:

❑Արդյոք տվյալներ հավաքագրում են պետական ֆինանսավորում ստացող բոլոր այն գերատեսչությունները, որոնք աջակցում են տուժողներին և զբաղվում բռնության կանխարգելմամբ:

- o Իրավապահ մարմինները (ներառյալ քրեական, ինչպես նաև քաղաքացիաիրավական մարմինները, ոստիկանությունը, դատախազությունը, դատարանները և քրեակատարողական հիմնարկները),
- o Առողջապահական ծառայությունները (օրինակ՝ բժիշկները, պատահարների և շտապ օգնության ծառայությունները, հիվանդանոցները),
- o Սոցիալական ծառայությունները, սոցիալական պաշտպանության և տուժողներին աջակցող մասնագիտացած ծառայությունները (պետական և ՀԿ),

❑Արդյոք տվյալներ հավաքագրում են հետազոտությունների միջոցով.

- o Դիտարկվե՞լ են կանանց նկատմամբ բռնության մոդուլներն ավելի մեծ հետազոտություններում, օրինակ՝ հանցավորության կամ առողջության հետազոտություններում ներառելու հնարավորությունները,

❑Արդյոք տվյալներն հավաքագրվում են նույն դասակարգումների կիրառմամբ:

- o Բռնության ձևերի սահմանումները (կոնվենցիայում նշված իրավական կատեգորիաները),
- o Չափման միավորները ներառում են տուժողներին, դեպքերը և իրավախախտներին (թվարկված բոլոր կատեգորիաները, այլ ոչ՝ դրանցից մեկը),
- o Տվյալների պարտադիր բացվածքը՝ ըստ սեռի, տարիքի, բռնության

տեսակի, տուժողի և իրավախախտի ունեցած հարաբերությունների և աշխարհագրական վայրի,

- ❑ Արդյո՞ք տվյալները կանոնավոր կերպով են հավաք ագրվում.
  - o Վարչական տվյալները,
  - o Հետազոտական տվյալները:
- ❑ Կա՞ն արդյոք կանանց նկատմամբ բռնության խորքային պատճառներին և հետևանքներին անդրադարձող՝ ֆինանսավորվող հետազոտական ծրագրեր.
  - o Դրանք ներառո՞ւմ են մեղադրական դատավճիռների ցուցանիշը:
  - o Արդյո՞ք տվյալները և վերլուծությունները տրամադրվում են հանրությանը.
  - o Ամփոփ տեսքով (ներառյալ ցուցանիշները),
  - o Տվյալների շտեմարաններում:
- ❑ Կա՞մ պաշտոնական մարմին (կամ պաշտոնական մարմիններ), որը պատասխանատու է տվյալների հավաքագրումը, վերլուծությունը և տարածումն համակարգելու համար:

Եվրոպայի խորհրդի կարևորագույն նյութերը

Եվրոպայի խորհուրդ (2011), Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (Ստամբուլի կոնվենցիա), առկա է համացանցում՝ http://conventions.coe.int/Treaty/EN/Treaties/html/210.htm, և Կոնվենցիայի բացատրական զեկույց, առկա է համացանցում՝ http://conventions.coe.int/Treaty/EN/Reports/ Html/210.htm:
Եվրոպայի խորհուրդ (2014), Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում կանանց բռնությունից պաշտպանության մասին թիվ Rec(2002)5 հանձնարարականի կատարման մոնիթորինգի 4-րդ շրջափուլի արդյունքների վերաբերյալ վերլուծական ուսումնասիրություն: Զեկույցի հեղինակ՝ Քերոլ Հագեման-Ուայթ, Եվրոպայի խորհրդի Գենդերային հավասարության հանձնաժողով:
Եվրոպայի խորհրդի ուսումնասիրություն. Ընտանեկան բռնության վերաբերյալ վարչական տվյալների հավաքագրումը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում (EG-VEW-DC(2008)Study):
Եվրոպայի խորհուրդ, Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին կոնվենցիա (ETS No. 108):
Նախարարների կոմիտեի թիվ Rec(2002)5 հանձնարարականն անդամ պետություններին կանանց բռնությունից պաշտպանության մասին:

Օգտագործված գրականության ցանկ

Council of Europe (2005), Convention on Action against Trafficking in Human Beings (CETS No. 197).
Council of Europe (2006), “Combating violence against women – Stocktaking study on the measures and actions taken in Council of Europe member states, Council of Europe, Strasbourg.
Council of Europe (2007), “Analytical study on the effective implementation of Recommendation Rec(2002)5 on the protection of women against violence in Council of Europe member states”, Report prepared by Carol Hagemann-White.
Council of Europe (2008a), “Administrative data collection on domestic violence in Council of Europe member states”, Report authored by Elina Ruuskanen and Kauko Aromaa.
Council of Europe (2008b), “Analytical Study of the Results of the 2nd Round of Monitoring the Implementation of Recommendation Rec(2002)5 on the Protection of Women Against Violence in Council of Europe Member States”, Report prepared by Carol Hagemann-White.
Council of Europe (2010), “Analytical study of the results of the 3rd round of monitoring the implementation of Recommendation Rec(2002)5 on the protection of women against violence in Council of Europe member states”, Report prepared by Carol Hagemann-White.
Council of Europe (2011a), Convention on Preventing and Combating Violence against Women and Domestic Violence (Istanbul Convention), available at: http://conventions.coe.int/Treaty/EN/Treaties/html/210.htm.
Council of Europe (2011b), Istanbul Convention Explanatory Report, available at: http://conventions.coe.int/Treaty/EN/Reports/Html/210.htm.
Council of Europe (2014), “Analytical study of the results of the 4th round of monitoring the implementation of Recommendation Rec(2002)5 on the protection of women against violence in Council of Europe member states”, Report prepared by Carol Hagemann-White, Council of Europe, Strasbourg.
Council of Europe Factsheet (2012), “Council of Europe Convention on Preventing and Combating Violence against Women and Domestic Violence (Istanbul Convention), Crimes committed in the name of so-called honour”,

available at: https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/sso/SSODisplayDCTMContent?documentId=090000168046eabf&ticket=ST-94479-ErdZdRa3t0aFlp7eXp2z-cas, accessed 25 January 2016.
Council of Europe Seminar (2014), "Tackling the gaps in research and the lack of data disaggregated by sex concerning women's access to justice", available at: www.coe.int/equality, accessed 4 December 2015.
DFID (Department for International Development) (2015), What Works to Prevent Violence Against Women, available at: www.gov.uk/funding-for-what-works- to-prevent-violence-against-women-and-girls, accessed 4 December 2015.
EIGE (European Institute for Gender Equality) (2012), Review of the Implementation of the Beijing Platform for Action in the EU Member States: Violence against Women – Victim Support, Publications Office of the European Union, Luxembourg.
EIGE (European Institute for Gender Equality) (2014a), Administrative data sources on gender-based violence against women in the EU: Current status and potential for the collection of comparable data, available at http://eige.europa.eu/sites/ default/files/MH0113492ENN_PDF.Web_.pdf, accessed 9 December 2015.
EIGE (European Institute for Gender Equality) (2014b), Mapping the current status and potential of administrative data sources on gender-based violence in the EU, available at: http://eige.europa.eu/gender-based-violence/ administrative-data-sources/about, accessed 9 December 2015.
EIGE (European Institute for Gender Equality) (2014c), Gender Equality Index http://eige.europa.eu/gender-statistics/gender-equality-index, accessed 9 December 2015.
European Commission (2010), Feasibility Study to Assess the Possibilities, Opportunities and Needs to Standardise National Legislation on Violence against Women, Violence Against Children and Sexual Orientation Violence, European Commission, Luxembourg.
European Commission (2015a), Rights, Equality and Citizenship Programme 2014-2020 http://ec.europa.eu/justice/grants1/programmes-2014-2020/rec/ index_en.htm, accessed 9 December 2015.
European Commission (2015b), Beijing Platform for Action, available at: http://ec.europa.eu/justice/gender-equality/tools/statistics-indicators/platform- action/index_en.htm, accessed 9 December 2015.
European Commission Advisory Committee on Equal Opportunities for Women and Men (2014), Opinion on data collection on violence against women, available at: http://ec.europa.eu/justice/gender-equality/files/opinions_advisory_ committee/141126_opinion_data_vaw_en.pdf, accessed 9 December 2015.
European Commission Daphne Toolkit, available at: http://ec.europa.eu/jus- tice/grants/results/daphne-toolkit/en/daphne-toolkit-%E2%80%93-active- resource-daphne-programme, accessed 9 December 2015.
European Commission Daphne III, available at: http://ec.europa.eu/justice/ grants1/programmes-2007-2013/daphne/index_en.htm, last accessed 9 December 2015.
FRA (European Union Agency for Fundamental Rights) (2014), Violence Against Women: An EU-wide Survey, available at: http://fra.europa.eu/en/publica- tion/2014/vaw-survey-main-results, accessed 9 December 2015.
Gender Equality Commission (2016), "Council of Europe Gender Equality Glossary", available at: www.coe.int/equality, accessed 25 January 2016.
Helweg-Larsen K. (2010), "Violence in close relationships. The prevalence, nature and

development as well as the efforts to combat intimate partner violence among women and men – 2010", National Institute of Public Health and Ministry of Gender Equality, Copenhagen: www.si-folkesundhed.dk/ upload/violence_in_close_relationships,_summary.pdf and National Institute of Public Health and Ministry of Gender Equality, www.si-folkesundhed.dk/ upload/english_summary.violence_003.pdf, accessed 9 December 2015.
HEUNI (2013), "International Violence Against Women Survey", available at: www.heuni.fi/en/index/researchareas/violenceagainstwomen/internationalviolenceagainstwomensurveyivaws.html, accessed 9 December 2015.
Instituto Nacional de Estad^stica (2014), Statistics on domestic violence and gender violence: Methodology May 2014, available at: www.ine.es/bus- car/searchResults.do?searchString=violence+against+women&Menu_botonBuscador=Search&searchType=DEF_SEARCH&startat=0&L=1, accessed 9 December 2015.
Kruse M., S0rensen J., Br0nnum-Hanse H. and Helweg-Larsen K. (2010), "Identifying victims of violence using register-based data", in Scandinavian Journal of Public Health, 2010, 0: 1-7.
LOKK, English page available at: www.lokk.dk/Info/In-English/.
Norway Grants (2015), "Domestic and gender-based violence", available at: http://eeagrants.org/What-we-do/Programme-areas/Justice-and-home-affairs/ Domestic-and-gender-based-violence, accessed 9 December 2015.
The Observatory against Domestic and Gender Violence, available at: www.poderjudicial.es/cgpj/en/Subjects/Domestic-and-gender-violence/Spanish-Observatory-on-Domestic-Violence, accessed 9 December 2015.
ONSa (Office for National Statistics) "Crime Survey for England and Wales (CSEW)", available at: www.crimesurvey.co.uk/index.html, accessed 9 December 2015.
ONSb (Office for National Statistics), "CSEW User Guide 2014", available at: http://www.ons.gov.uk/ons/guide-method/method-quality/specific/crime- statistics-methodology/index.html, accessed 9 December 2015.
ONSc (Office for National Statistics), "CSEW Questionnaire", available at: http:// www.ons.gov.uk/ons/guide-method/method-quality/specific/crime-statistics- methodology/index.html, accessed 9 December 2015.
ONSd (Office for National Statistics), "CSEW annual findings 2014", available at: www.ons.gov.uk/ons/rel/crime-stats/crime-statistics/year-ending-septem- ber-2014/stb-crime-in-england-and-wales--year-ending-september-2014. html, accessed 9 December 2015.
Statistics Denmark (2015), Data for Research, available at: www.dst.dk/en/ TilSalg/Forskningsservice#, accessed 9 December 2015.
Thygesen L. C. and Kjaer Ersboll A. (eds) (2011), "Danish population-based registers for public health and health-related welfare research – A description of Danish registers and results from their application in research", Scandinavian Journal of Public Health, 39 (7): 1-209.
UNDAW (United Nations Division for the Advancement of Women) (2010), Handbook for Legislation on Violence Against Women, available at: www.un.org/ womenwatch/daw/vaw/handbook/Handbook%20for%20legislation%20on%20 violence%20against%20women.pdf, accessed 9 December 2015.
United Nations Department for Economic and Social Affairs (2014), Guidelines for

Producing Statistics on Violence Against Women: Statistical Surveys, UN Department for Economic and Social Affairs, available at: http://unstats.un.org/ unsd/gender/docs/ Guidelines_Statistics_VAW.pdf, accessed 9 December 2015.
United Nations General Assembly (1993), Declaration on the Elimination of Violence against Women, available at: www.un.org/documents/ga/res/48/ a48r104.htm, accessed 9 December 2015.
United Nations Statistical Commission (2010), "Report on the Meeting of the Friends of the Chair of the United Nations Statistical Commission on Statistical Indicators on Violence against Women", 9-11 December 2009, Aguascalientes, Mexico, available at: www.un.org/womenwatch/daw/vaw/IssuesFocus/Report- of-the-Meeting-of-the-Friends-of-the-Chair-February-2010.pdf, accessed 9 December 2015.
UNODC (United Nations Office for Drugs and Crime) (2015), International Classification of Crimes for Statistical Purposes. March 2015, Version 1.0, available at: www.unodc.org/documents/data-and-analysis/statistics/crime/ICCS/ ICCS_final-2015-March12_FINAL.pdf
Walby S. (2004), "The Cost of Domestic Violence", DTI Women and Equality Unit, London, available at www.devon.gov.uk/cost_of_dv_report_sept04.pdf.
Walby S. (2005), "Improving the statistics on violence against women", in Statistical Journal of the United Nations Economic Commission for Europe, 22(4): 193-216.
Walby S. and Allen J. (2004), Domestic Violence, Sexual Assault, Stalking: Findings from British Crime Survey, Home Office Research Study 276, Home Office, London, available at www.avaproject.org.uk/media/28792/hors276.pdf.
Walby S and Myhill A. (2001), "New survey methodologies in researching violence against women", in British Journal of Criminology, 41(3): 502-522.
Walby S. and Olive P. (2014), Estimating the Costs of Gender-Based Violence in the European Union, EIGE, Vilnius.
Walby S., Towers J. and Francis B. (2014), "Mainstreaming domestic and gender-based violence into sociology and the criminology of violence", in Sociological Review, 62(S2): 187-214.
WHO (2005), WHO Multi-country Study on Women's Health and Domestic Violence against Women, available at: www.who.int/reproductivehealth/publications/ violence/24159358X/en/, accessed 9 December 2015.
WHO (2014), International Classification of Diseases (ICD), available at: www. who.

int/classifications/icd/en/, accessed 9 December 2015.

Հոդված 11. Տվյալների հավաքագրում և հետազոտություններ

1.Սույն Կոնվենցիայի կատարման նպատակով, մասնակից պետությունները պարտավորվում են՝

ա. կանոնավոր պարբերականությամբ դասակարգված վերաբերելի վիճակագրական տվյալներ հավաքել սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի դեպքերի մասին;

բ.աջակցել հետազոտությունների անցկացմանը՝ հիմնախնդրի խորքային պատճառների և հետևանքների, դրսևորման դեպքերի և դատապարտումների տոկոսային հարաբերակցության, ինչպես նաև ի կատարումն սույն Կոնվենցիայի ձեռնարկված միջոցառումների արդյունավետության վերաբերյալ:

2.Մասնակից պետությունները պետք է ձեռնամուխ լինեն կանոնավոր պարբերականությամբ անցկացնելու բնակչությունն ընդգրկող հետազոտություններ՝ սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի տարածվածությունն ու զարգացման տենդենցները գնահատելու համար:

3.Մասնակից պետությունները սույն Կոնվենցիայի 66-րդ հոդվածում նշված Անկախ փորձագիտական խմբին պետք է տրամադրեն սույն հոդվածի համաձայն հավաքված տեղեկատվությունը՝ միջազգային համագործակցությունը խթանելու և միջազգային ցուցիչների հիման վրա կատարողականի գնահատման հնարավորություն տալու նպատակով:

4.Մասնակից պետություններն պետք է ապահովեն, որպեսզի սույն հոդվածի համաձայն հավաքված տեղեկատվությունը մատչելի լինի հանրության համար:PREMS 204915

PREMS 204915

HYE

Եվրոպայի խորհուրդը մարդու իրավունքների առաջատար կազմակերպությունն է մայրցամաքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, որոնցից 28-ը ԵՄ անդամ պետություններ են: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային, որը կոչված է պաշտպանելու մարդու իրավունքները, ժողովրդավարությունը և իրավունքի գերակայությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

www.coe.int

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE